ԱԼԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
Հեղինակային հրատարակություն
2015

ՀՏԴ 159.9.072.5(07)

ԳՄԴ 88 у7

Գ 206

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը

Գալստյան Ա.Ս.
Գ 206 Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանական հետազոտություններում: Ուսումնական ձեռնարկ / Ա.Ս. Գալստյան– Եր.: Հեղ. հրատ., 2015. - 109 էջ:

Սույն ուսումնական ձեռնարկը կազմվել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի հոգեբանության բաժնի «Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանական հետազոտություններում» դասընթացի ծրագրի հիման վրա:

Ձեռնարկում ներկայացված է մաթեմատիկական վիճագրության մեթոդները, դրանց ընտրության և կիրառության սկզբունքները հոգեբանական հետազոտություններում: Պարզեցված ներկայացվում են հետազոտական տվյալների վերլուծության գործակիցներն ու գիտական հավաստման չափանիշները, բերվում են հաշվարկման օրինակներ: Նաև ձեռնարկն ընգրկում է համակարգչային ծրագրերի օգնությամբ հաշվարկների իրականացման հուշումներ:

Նախատեսված է հոգեբանության ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների և այն մասնգետների համար, ովքեր հետաքրքրված են հետազոտական տվյալների մշակման գրագիտությամբ:

ՀՏԴ 159.9.072.5(07)

ԳՄԴ 88 у7

ISBN 978-9939-0-1346-6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մաթեմատիկան հարկ է սիրել թեկուզև
նրա համար, որ այն կարգավորում է խելքը:
Մ.Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎ

Մաթեմատիկական մեթոդների կիրառությունը գիտության ցանկացած բնագավառում ունի իր յուրահատկություններն ու օրինաչափությունները: Հոգեբանության մեջ դրանք առաջին հերթին կիրառվում են փորձարարական և հետազոտական տվյալների մշակման, արդյունքների մեկնաբանման և գիտականորեն հավաստման համար: Գոյություն ունի ընդհանրացված կարծրատիպ, որ մաթեմատիկական վիճակագրության մեթոդների տիրապետումը և կիրառությունը հոգեբանական հետազոտություններում կապված է մեծ դժվարությունների հետ և պահանջում է մաթեմատիկական հատուկ ընդունակություններ: Այդ իսկ պատճառով ուսանողների շրջանում հաճախ մաթեմատիկական մեթոդների կիրառության անհրաժեշտությունն ուղեկցվում է մտավախությամբ: Սակայն, համապատասխան գիտելիքների յուրացման և գործնական առաջադրանքների ինքնուրույն կատարման շնորհիվ կարելի է տիրապետել մաթեմատիկական վիճակագրության պարզագույն մեթոդներին և ունենալ նախադրյալներ՝ հետագա կիրառության առավել լայն ասպարեզների հասնելու համար:

Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառությունը հոգեբանական հետազոտություններում նպաստում է ոչ միայն մաթեմատիկական ապարատի հզորացմանը այլ բնագավառներում, այլև հոգեբանության զարգացմանը: Այդ մասին են վկայում մաթեմատիկական հոգեբանության զարգացումն ու տարբեր մաթեմատիկական վիճակագրական կիրառական համակարգչային ծրագրերի մշակումն ու տարածումը: Օր օրի մեծանում է հետաքրքրությունը հոգեբանության «մաթեմատիկացման» նկատմամբ և հոգեբանության մեջ ավելի ու ավելի են օգտագործվում մաթեմատիկական վիճակագրության մեթոդները:

Հոգեբանական հետազոտություններում մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառումն էապես փոխում է դրանց բովանդակությունը: Մի կողմից առաջ են գալիս հոգեկան երևույթների ուսումնասիրության նոր հնարավորություններ, մյուս կողմից ավելի խիստ պահանջներ են ներկայացվում հոգեբանության հասկացությունների ապարատին, հետազոտության խնդրի ձևակերպմանը և նոր տեսությունների, հայեցակարգերի կառուցմանը:

Հոգեբանական հետազոտություններում մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառությունը նպաստում է տեսական մոտեցումների, հայեցակարգերի, հիմնադրույթների հիման վրա կանխատեսվող արդյունքի հիմնավորմանը և գիտական հավաստմանը: Այն, ինչ հնարավոր է ստանալ ենթադրությունների և սթափ դատողությունների արդյունքում, անշուշտ պահանջում է գիտական ապացույց, որպեսզի ծառայի մասնագիտական գործունեության առաջընթացին:

Ձեռնարկում բերված նյութերը հնարավորություն են տալիս ծանոթանալու մաթեմատիկական վիճակագրության հիմնական հասկացություններին, ունենալ պատկերացումներ չափման սանդղակների և տվյալների բաշխվածության մասին, հասկանալ, թե ինչ է հետազոտական ընտրանքի համար կենտրոնական ցուցանիշը և ինչպես կարող է այն լինել ներկայացչական: Պարզագույն գիտելիքների հիման վրա ընթերցողները կարող են ծանոթանալ կոռելյացիայի հասկացությանը, գծային և ոչ գծային փոխկապակցվածության գործակիցներին և ձեռք բերել դրանց կիրառության գործնական հմտություններ:

Հաշվի առնելով «Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանության մեջ» առարկայի ըմբռնման յուրահատկությունը և հետազոտական տվյալների մշակման կիրառական նշանակությունը, մատչելիության նպատակով ներկայացված թեմաներին համապատասխան բերված են գործնական օրինակների հաշվարկներ:

Առաջարկվող ձեռնարկը նախահիմք է հանդիսանում «Հոգեդիագնոստիկա» առարկայի Հոգեմետրիկա և Թեստաբանություն բաժինների յուրացման համար, տրամաբանորեն կապված է «Փորձարարական հոգեբանություն» առարկայի հետ, ինչպես նաև ուղղված է ուսանողների մոտ մաթեմատիկական մտածողության ձևավորմանը և հետազոտական մտքի խթանմանը:

Հոգեբանության յուրաքանչյուր բնագավառում հետազոտությունը ավելի հիմնավոր կազմակերպելու և արդյունքների ապացուցելիությունը ապահովելու համար մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառությունը անհրաժեշտություն է:

«Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանական հետազոտություններում» դասընթացի թեմանիերին համապատասխան կազմված նյութերը հոգեբան ուսանողների համար կարող են ապահովել փորձարարական ու հետազոտական արդյունքների հաշվարկման և մշակման մատչելիություն, ձևավորել գիտելիքներ հոգեմետրիկայի պարզագույն հասկացությունների, քանակական ցուցանիշների վերլուծության և մեկնաբանման մասին:

Ձեռնարկը հնարավորություն կտա.

- ✓ ծանոթանալ փորձարարական և հետազոտական նպատակներով ստացված տվյալների քանակական և որակական վերլուծությունների օրինաչափություններին, ուսումնասիրել համապատասխան հոգեբանական խնդրի լուծման համար մաթեմատիկական չափման պարզագույն հնարավորությունները,
- ✓ կատարել մաթեմատիկական մեթոդների ընտրություն համապատասխան հետազոտական խնդրի համար,
- ✓ գործնականում գրագետ կիրառել մաթեմատիկական վիճակագրության հիմնական հասկացություններն ու բանաձևերը,
- ✓ ծանոթանալ մաթեմատիկական մեթոդների կիրառության համակարգչային ծրագրերին, կատարել ինքնուրույն առաջադրանքներ գիտելիքի յուրացման և ամրպնդման համար:

Հոգեբանի մասնագիտական գործունեության մեջ հետազոտական տվյալների մշակման և արդյունքների վերլուծության համար մաթեմատիկական վիճակագրության մեթոդների արդյունավետ կիրառման նպատակով այս ձեռնարկում ընդգրկված են ոչ միայն մաթեմատիկական վիճակագրության հասկացությունները, չափանիշները ու դրանց մեկնաբանումները, այլև բերված են գործնական օրինակներ ու վարժություններ: Նշենք, որ այդ հարցում աջակցություն ենք ստացել ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի հոգեբանության բաժնի ուսանող Ա. Անդրեասյանից, ինչպես նաև ընդգրկել ենք հետազոտական արդյունքներ տարիների ընթացքում նաև ԵՊՀ «Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիայում» կատարված ուսումնական և գիտահետազոտական աշխատանքներից:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառությունը հոգեբանական հետազոտություններում նպաստում է հոգեբանության տարբեր բնագավառներում հետազոտական որակական և քանակական տվյալների հավաստի վերլուծությունների կատարմանը: Դրանք արդյունավետ իրագործվում են մաթեմատիկական վիճակագրական կիրառական համակարգչային ծրագրերի մշակուման ու տարածման ծնորհիվ: Հոգեբանության մաթեմատիկացման արդյունքում մեծանում են գիտության զարգացման հնարավորությունները, առաջացնելով նոր պահանջներ:

Հոգեբանության մեջ մաթեմատիկական մեթոդների օգտագործումը իրագործվում է տարբեր ձևերով [6, էջ 126]

1) փորձերի տվյալների վիճակագրական մշակման ժամանակ,

2) նպաստում է գտնել ուսումնասիրվող փոփոխականների միջև կապը՝ նկարագրող ֆունկցիայի որոնման ժամանակ,

3) ստեղծում և փորձարկում է հոգեկան երևույթների և գործընթացների մաթեմատիկական մոդելները:

Առաջին կետին կարելի է ավելացնել նաև փորձերի պլանավորման մաթեմատիկական տեսությունը, որը ինքնին նոր բաժին է մաթեմատիկական վիճակագրության մեջ, բայց արդեն կիրառվում է փորձնական հոգեբանական հետազոտություններում:

Մաթեմատիկական հոգեբանությունը մեթոդների համախմբության տեսանկյունից կարելի է դիտարկել որպես մի ինքնատիպ բաժին, որն ընկած է հոգեբանության մյուս բոլոր բաժինների մեջ նույնպես: Ավելի ճիշտ է մաթեմատիկական հոգեբանությունը դիտարկել որպես հոգեբանական գիտության զարգացման որոշակի աստիճան: Այս տեսակետը ամրապնդում է այն փաստը, որ այժմ հոգեբանության գրեթե բոլոր ճյուղերը էլ ավելի են ունենում մաթեմատիկայի օգնության կարիքը:

Հոգեբանության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման հարցը նոր չէ. այս հարցով զբաղվում էին դեռևս նախորդ դարերից: Մաթեմատիկական հոգեբանության ստեղծման մեջ իր կարևոր ներդրումն ունի գերմանացի փիլիսոփա և հոգեբան Իոհան Ֆրիդրիխ Հերբերտը: Դեռևս 1822 թվականին նա Բեռլինում հանդես էր եկել «Հոգեբանության մեջ մաթեմատիկայի կիրառման հնարավորությունների և անհրաժեշտությունների մասին» զեկուցումով, որտեղ բերված էին իր կողմից մշակված և կիրառված մեթոդոլոգիական սկզբունքները [31, էջ 13]:

Հոգեբանության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառմամբ հետաքրքրվել և զբաղվել են Հելմհոլցը, Վունդտը, Պուանկարեն, Ադամարը, Բորը, Էյնշտեյնը, Պավլովը: Այս ժամանակաշրջանի հետազոտությունները կարելի է դասել ամենաառաջին փորձնական քայլերի թվին: Այդ շրջանի մաթեմատիկական ապարատն էլ դեռևս ընդունակ չէր ավելին ապահովելու այդ աշխատանքներում: Նախորդ դարի կեսերը հայտնի են որպես մաթեմատիկական հոգեբանության նկատմամբ հետաքրքրությունների թուլացման ժամանակաշրջան: Սակայն, կարճ ժամանակում այդ հետաքրքրությունը ժայթքեց նոր ուժգնությամբ, որը մեծ չափով կախված էր ինչպես կոնկրետ մաթեմատիկայի, այնպես էլ մի շարք տեխնիկական գիտությունների զարգացման հետ: Այդ ժամանակ ծնվում և զարգանում էին ինֆորմացիայի տեսությունը, կիբեռնետիկան, համակարգերի տեսությունը, մոդելավորումը և այլն [6]:

Հոգեբանության մեջ մաթեմատիկայի ներթափանցումը հետագայում շարունակվել է ինժեներական հոգեբանության զարգացմանը զուգընթաց, երբ ընդլայնվեցին «մարդ-մեքենա» համակարգերի ուսումնասիրման շրջանակները և կիրառվեցին մաթեմատիկական վիճակագրության նոր մոտեցումներն ու մեթոդները: Ավելի ուշ դրանք կիրառվեցին նաև հոգեբանության այլ ճյուղերում:

Հոգեբանության բնագավառում մաթեմատիկայի կիրառության հիմնական ուղղությունը հոգեմետրիկայի ապարատի զարգացումն ու վարքային մոդելների կառուցումն է: Այն կապված է Հերբերտի, Ֆեխների, Էբինհաուզի մեթոդոլոգիական միջոցների զարգացման հետ:

Մյուս ուղղությունը դա ֆիզիոլոգիական ուղղությունն է: Այստեղ մարդը ակտիվ արտացոլման սուբյեկտից վերածվում է բնագիտական ուսումնասիրության օբյեկտի: Ֆիզիոլոգները մշակեցին և ապացուցեցին հոգեկան գործընթացների հիմքում ընկած ֆիզիոլոգիական մեխանիզմների գոյությունը: Այդ ուղղությամբ արժեքավոր տվյալներ ստացվեցին Սեչենովի, Պավլովի, ավելի ուշ Հասրաթյանի կողմից: Այս ուղղության ներսում ստեղծվեց օրգանիզմի ղեկավարման մաթեմատիկական տեսությունը: Ֆիզիոլոգիական մեխանիզմները հարմար ապարատ էին, բայց նրանցում թաքնված դժվարությունները ի հայտ եկան, երբ ուղեղի մոդելավորման փորձեր արվեցին: Ֆիզիոլոգիական ուղղության թերություններից մեկը կայանում էր նրանում, որ ընդունվում էր «նույնատիպ կառուցվածքի դեպքում նույնատիպ ֆունկցիա» պոստուլատը, որը ճիշտ է միայն պարզ համակարգերի համար [6]:

Երրորդ ուղղությունը ստեղծվեց Բուլի կողմից՝ մաթեմատիկական տրամաբանության բնագավառում, բայց միայն Պիաժեի հետազոտությունների և աշխատանքների միջոցով այն կապվեց հոգեբանության հետ: Այս ուղղության առավելությունը կայանում էր նրա արտադրողականության մեջ. ստեղծվեցին բազմաթիվ մոդելներ, որոնք հնարավորություն էին տալիս ստանալու գործունեության արդյունքի պատկերը մարդուց անկախ:

Ինչպես տեսնում ենք, բոլոր ուղղությունները վերջին հաշվով հանգեցնում են մաթեմատիկական մոդելների ստեղծմանն ու մշակմանը: Սա էլ հենց հանդիսանում է մաթեմատիկական հոգեբանության ժամանակակից հիմնական խնդիրը: Չնայած աշխատանքներն այդ ուղղությամբ դեռևս ցանկալի արդյունք չեն տալիս, այնուամենայնիվ մաթեմատիկայի տված օգնությունը հոգեբանությանը անժխտելիորեն նշանակալի է և ցանկալի: Մաթեմատիկայի օգտագործումն է, որ հոգեբանությունը հումանիտարից մոտեցրել և շարունակում է մոտեցնել ճշգրիտ գիտության: Օրինակ, հոգեբանության մեջ չափումների և թվային սանդղակների պրոբլեմը շատ արդիական է: Արդեն մասնագետների կողմից կազմված են սանդղակների տեսակներ, որոնք հնարավորություն են տալիս չորս մակարդակներով (ամենաթույլ, ընդհանուրից մինչև ամենաուժեղ և յուրահատուկ) գնահատել կատարված չափումները՝ ընդ որում թե՛ հոգեբանական և թե՛ մաթեմատիկական տեսանկյունից: Դրանք են. անվանումների, կարգային, ինտերվալային և հարաբերությունների սանդղակները:

Մաթեմատիկան զգալի օգնություն է ցուցաբերում հոգեբանությանը նաև փորձնական հետազոտությունները կազմակերպելու, անցկացնելու և տվյալները մշակելու գործում: Հայտնի է, որ հոգեկան երևույթները բազմագործոնային են և փորձարարության ընթացքում անհրաժեշտ է լինում առանձնացնել առաջնային գործոնները, նրանց ազդեցությունը երկրորդայիններից և ընդհանրապես ապահովել «մաքուր փորձարարության» բոլոր պայմանները: Մաթեմատիկական տեսությունները հնարավորություն են տալիս լուծել այդ պրոբլեմներից շատերը, գործոնային վերլուծություն կատարել և առանձնացնել առաջնային գործոնները երկրորդայիններից: Փորձարարությունների պլանավորման մաթեմատիկական տեսությունը հնարավորություն է ընձեռնում տվյալների մշակման ժամանակ հետազոտել գործոնների առանձին-առանձին և համատեղ ազդեցությունները, միաժամանակ ի նկատի ունենալով երկրորդային գործոնների նշանակությունը [6, 129]: Այժմ հոգեբանական հետազոտություններում լայն կիրառում է ստացել մաթեմատիկական մոդելների կառուցումը, որն անկասկած մեծ նշանակություն ունի հոգեբանության զարգացման համար: Հսկայական արժեքավոր աշխատանքներ են կատարվել հոգեկան երևույթների մոդելավորման ուղղությամբ: Ստեղծված մոդելները հնարավորություն են տալիս միանշանակ նկարագրել բազմաթիվ փորձարարական տվյալներ:

Ինչպես վերը նշվեց, հոգեբանության մեջ մաթեմատիկայի կիրառման անհրաժեշտությունը ակնհայտ է: Սակայն այս հարցի վերաբերյալ գոյություն են ունեցել երկու հակադիր տեսակետներ: Մի տեսակետի ներկայացուցիչները համարել են, որ հոգեկան երևույթների ուսումնասիրության գործընթացում եղած բոլոր դժվարությունների հաղթահարման ճանապարհը հոգեբանության մաթեմատիկացումն է: Նրանք մաթեմատիկայի մեջ տեսել են բոլոր դժվարությունների համադրումը: Մյուս տեսակետի նրկայացուցիչները պնդել են, որ հոգեբանության գիտության յուրահատկության պատճառով հոգեբանության մեջ մաթեմատիկայի կիրառումը անհնար է, և որ դա խառնաշփոթից բացի ուրիշ ոչինչ չի տա: Երկու տեսակետներն էլ, առանձին վերցված, հիմնված են թյուրիմացության վրա: Շատ դեպքերում չենք կարողանում տեսնել ու գնահատել մաթեմատիկայի իրական հնարավորությունները:

Մաթեմատիկական մեթոդները հնարավորություն են տալիս գիտական տեղեկությունները ձևափոխել տեսական աշխատանքների համար առավել հարմար տեսքի: Նույնիսկ հոգեբանական տվյալների պարզ թարգմանությունը մաթեմատիկական լեզվով, հնարավորություն է տալիս դրանք արտահայտել առավել հավաք և ըմբռնման համար հարմար տեսքով, բացահայտել հակասությունները և, որ ամենակարևորն է, կանխագուշակել մոդելավորված գործընթացի հնարավոր զարգացումը:

Հոգեկան երևույթների մաթեմատիկական մոդելները դեռևս բավականին թերություններ ունեն, որոնց պատճառները բազմազան են: Փորձենք դիտարկել այդ պատճառներն առանձին-առանձին, քանի որ դրանք կազմում են ժամանակակից մաթեմատիկական հոգեբանության հիմնական խնդիրները: Նախ դա լեզվի հարցն է: Շատ հաճախ աշխատանքները ցանկալի արդյունք չեն տալիս այն պատճառով, որ հոգեբանների և մաթեմատիկոսների միջև փոխըմբռնումը բավարար մակարդակի վրա չէ: Եթե շատ դեպքերում հոգեբաններին հաջողվում է մաթեմատիկոսների համար հնարավորին չափ ճշգրիտ սահմանել գաղափարները և ձևակերպել խնդիրները, ապա ավելի հաճախ մաթեմատիկոսները դժվարանում են հոգեբաններին հավաստիացնել ստացված մաթեմատիկական եզրույթների իմաստը, դրանք թարգմանել հոգեբանների համար հասկանալի լեզվով: Ուստի անհրաժեշտ է մի ընդհանուր լեզվի ստեղծումը, որը հոգեբաններին և մաթեմատիկոսներին համատեղ արդյունավետ աշխատելու հնարավորություն կտա:

Դժվարությունները առաջ են գալիս նաև նրանից, որ դեռևս գոյություն ունեցող մաթեմատիկական ապարատը չի բավարարում հոգեբանության պահանջներին: Սա հարցի մի կողմն է: Հարցի մյուս կողմն այն է, որ դեռևս խիստ չեն ձևակերպված հենց հոգեբանության այդ պահանջները: Բայց չէ՞ որ մաթեմատիկական համապատասխան ապարատը պետք է ստեղծվի և զարգանա ոչ ուրիշի, այլ հոգեբանության օգնությամբ, հոգեբանության մեջ և հոգեբանության համար: Ուստի հարկավոր է, որ հոգեբանները իրենք խիստ սահմանեն իրենց խնդիրները, մշակեն դրանց լուծման մեթոդները, իհարկե, ի նկատի ունենալով մաթեմատիկական հոգեբանության արդեն տրված դասերը: Եթե ճիշտ նշվի այն մոտեցումը, որը հարկավոր է կիրառել հոգեբանության օբյեկտի նկատմամբ, ապա անմիջապես պարզ կդառնա նաև այդ օբյեկտի մոդելավորման համար անհրաժեշտ մաթեմատիկական մոտեցումը:

Հոգեբանության օբյեկտն ունի շատ յուրահատուկ կազմություն: Եթե փորձենք մեկ բառով ասել, ապա դա հոգեկան գործընթացների համակարգայնությունն է: Հոգեկան գործընթացների համակարգայնություն ասելով հասկանում ենք նրանց ամբողջականությունը, բազմաչափությունը, դինամիկան, հիերարխիկ կառուցվածքը:

Հոգեբանական հետազոտությունների հիմնական օբյեկտը մարդն է և նրա հոգեկանը, որն ըստ Պավլովի և Անանևի իրենից ներկայացնում է մեկ ամբողջական համակարգ: Փիլիսոփայական վերլուծությունը առանձնացնում է մարդու կառուցվածքի կազմավորման 3 տարրեր՝ նյութակառուցվածքային, գործառնական և համակարգային: Մարդու հոգեկան հատկությունները հարկավոր է դիտել որպես համակարգային հատկություններ: Համակարգային հատկությունները, լինելով «գումարային», թույլ չեն տալիս անմիջական ուսումնասիրության: Դրանք ուսումնասիրելու համար հարկավոր է ուսումնասիրել, գիտական վերլուծության ենթարկել այն համակարգերը, որոնց պատկանում է մարդը և, որոնց օրինաչափություններին ենթարկվում է մարդու վարքը: Այդ պատճառով է, որ մարդու հոգեկանը ուսումնասիրելու համար կիրառվում է համակարգային մոտեցում, մարդը միաժամանակ դիտարկվում է և՛ որպես սոցիալական էակ, և՛ որպես կենսաբանական օրգանիզմ, և՛ որպես ֆիզիկական համակարգ:

Հոգեբանության մեջ համակարգային մոտեցման մասին խոսվել է դեռևս վաղուց, բայց միայն հոգեբանության ժամանակակից զարգացածության շնորհիվ է այն կիրառվում: Այս ուղղությամբ առաջին քայլը եղել է հոգեբանական գիտության տարբեր բնագավառներում կուտակված տվյալների համակարգումը, նրանց միջև անցումային կոնցեպցիաների, «կոնցեպտուալ կամուրջների» մշակումը: Համակարգային մոտեցումը մաթեմատիկական հոգեբանության մեջ նույնպես առաջ է բերել դրա անհրաժեշտությունը և այսօր հոգեկան երևույթների մոդելավորման նոր պահանջներ են առաջանում:

Ընդհանրապես համակարգային մոտեցումը, մոդելավորումը հոգեբանության և մաթեմատիկական հոգեբանության զարգացման ընդհանուր ճանապարհն է, իսկ պարզել, թե կոնկրետ ի՞նչպես կզարգանա, օրինակ, հոգեկան երևույթների համակարգային մոդելավորումը հետագայում, դժվար է պատկերացնել: Մի բան է պարզ, որ եթե հոգեկան երևույթները բազմաչափ են, բազմամակարդակ, դինամիկ և ամբողջական, ապա նրանց հարկավոր է մոտենալ հենց որպես այդպիսինների, և այդ գործընթացը վաղուց սկսված է:

Կարող ենք անդրադառնբալ նաև գենետիկական մոտեցմանը, որն իր մեջ ամփոփում է ոչ միայն ֆիլոգենետիկական և օնթոգենետիկական մոտեցումները՝ կապված մարդու վարքի և անհատական հատկանիշների հետ, այլև սոցիոգենետիկականը և պատմականը: Ընդհանրապես գենետիկական մոտեցումն ուղղված է հոգեբանական ցանկացած ֆենոմենի ակունքների ուսումնասիրությանը, և նախագծային խնդիրների, մոդելների և մաթեմատիկական տրամաբանության տարրերի օգտագործման ընդլայնված հնարավորությունները կարող են հանգեցնել հոգեկան երևույթների արդյունավետ ուսումնասիրություններին:

Ենթադրվում է, որ մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառությանը վերաբերվում է գիտության այս կամ այն բնագավառում ակադեմիական հետազոտությունների ամփոփման համար, և որ գործնական աշխատանքներում լիովին բավարար են ողջամտությունը [27, էջ 17], վերլուծությունների արդյունքում ձևավորված դատողություններն ու եզրահանգումները, սակայն մաթեմատիկական ապարատի կիրառությունը մասնագիտական գործունեության մեջ հնարավորություն է ստեղծում համոզվել սեփական ենթադրություններում, գտնել դրանց հիմնավորման և հավաստման այլ, առավել ստույգ միջոցներ:

Չափումների տեսության մեջ կարելի է հանդիպել այն համոզմանը, որ գիտության հասունությունը սովորաբար չափվում է նրանով, թե արքանով է այն օգտագործում մաթեմատիկան [35, 48]: Հոգեբանության կայացման համար տասնամյակներ շարունակ մեծ ազդեցություն է ունեցել մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառումը: Չի կարելի հերքել, որ հոգեբանական հիմնարար տեսությունները նույնպես իրենց զարգացումն են ունեցել մաթեմատիկական հենքի վրա: Ինչպես նշում են շատ հեղինակներ Ա.Ն. Լեոնտևի գործունեության, Զ.Ֆրոյդի հոգեվերլուծական, Է. Բերնի տրանսակտային վերլուծություններում, որակական մեկնաբանություններից բացի, հենվում են նաև քանակականների վրա, քանի որ հետազոտման օբյեկտը դրվում է որոշակի չափման և համակարգման մեջ [2, 6, 31, 36]: Վերջինս հնարավոր է դարձնում անդրադառնալ հոգեբանական բնութագրերին, հատկանիշներին և որակներին ոչ միայն անհատական, այլև վիճակագրական ընթացակարգերով, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները և ծրագրերը:

Վիճակագրական ընթացակարգերը հնարավորություն են ստեղծում ապացուցել տարբեր մեթոդական հնարքների ճշգրտությունն ու հավաստիությունը, ինճպես նաև բացահայտել հետազոտական տվյալների համդրությունները, հակադրություններն ու փոխկապակցվածությունները: Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառությունը հոգեբանական հետազոտություններում նպաստում է ստացված հիպոթետիկ կանխատեսումներում և եզրահանգումներում տարբեր տիպի անճշտությունների և սխալների նվազեցմանը: Յանկացած փորձարարության մեջ, հետազոտական մեծ քանակների դեպքում, երբ հստակ ձևակերպված է նպատակը և խնդիրները, հիմնական արդյունավետությունն ապահովում է գիտական հավաստման միջոցի՝ մաթեմատիկական վիճակագրության ապարատի, համապատասխան կիրառումը:

1. ԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Հոգեբանական հետազոտություններում տարբեր բնույթի որակական և քանակական ցուցանիշների վերլուծության հիմնական դժվարությունը և նրբությունը կայանում է նրանում, որ հնարավոր չէ լիովին հաշվի առնել պատահական, դժվար հսկվող, կամ գուցե չհսկվող երևույթների ազդեցությունը դրանց վրա, գործոնների սուբյեկտիվությունը, փոխադարձ կախվածություններն ու փոփոխականությունը:

1.1. ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐ

Հոգեբանական հետազոտություններում չափվող հատկանիշները կարող են հանդես գալ որպես փոփոխական մեծություններ: Հատկանիշները և փոփոխականները, որպես հոգեբանական ցուցանիշներ, իրար հետ փոխկապակցված են և ունեն շատ ընդհանրություններ: Չափման մեջ հատկանիշներին վերագրելով «մակարդակ», «ցուցանիշ» և նմանատիպ այլ հասկացություններ, հնարավորություն ենք ունենում հետազոտական համապատասխան ենթատեքստում դրանք դիտարկել «բարձր», «ցածր» կամ «միջին» դրսևորումներով:

Հոգեբանական հատկանիշները կամ փոփոխականները հանդիսանում են պատահական մեծություններ, քանի որ նախորոք չենք կարող իմանալ, թե ինչ գնահատական կընդունեն նրանք չափման մեջ: Հոգեբանական հետազոտություններում չափվող մեծություններ կարող են լինել, օրինակ.

- առաջադրանքի կատարման ժամանակը,
- թույլ տրված սխալների քանակը,
- ագրեսիվ ռեակցիայի ինտենսիվությունը,
- անձնային այս կամ այն որակի դրսևորման մակարդակը,
- ինտելեկտուալ լաբիլության ցուցանիշը,
- զրույցի ընթացքում թեքվելու անկյան մեծությունը,

- իմացական ոլորտի որևէ ցուցանիշ և այլն…

1.2. ՉԱՓՄԱՆ ՍԱՆԴՂԱԿՆԵՐ

Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների մշակում հոգեբանական հետազոտություններում նշանակում է հետազոտվողների արդյունքներից ստացված տվյալների մաթեմատիկական գործողությունների կատարում ըստ համապատասխան չափանիշի: Հետազոտական տվյալներին, որպես ցուցանիշներ, հավաքագրվում են որևէ մեթոդի՝ դիտման, զրույցի կամ թեստային, արդյունքներից: Յուրաքանչյուր հատկանիշի նշանակությունը կարող է որոշվել չափման սանդղակների միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ներկայացնելու ոչ միայն քանակական, այլև որակական տվյալները: Ս. Սթիվենսը առանձնացնում է չափման 4 սանդղակներ [34, էջ 12].

ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿ

Այս սանդղակում դասակարգումը չի կատարվում քանակական չափմամբ, այլ այն հնարավորություն է տալիս տարբերակում կատարել: Սանդղակն անվանում են նաև նոմինալ: Անվանումների սանդղակը բնորոշ է այլընտրանքային հատկանիշներով արտահայտված տարբերակներին. «կողմ – դեմ», «աջ – ձախ», «առկա է - առկա չէ», «ունի – չունի», «անցել է - չի անցել» և այլն… Նշված դեպքերում գործ ունենք երկու բջջի հետ՝ 0 կամ 1: Ավելի բարդ տարբերակ է 3 և ավելի բջիջների առկայությունը. օրինակ, խառնվածքի տիպերի դասակարգման ժամանակ դրանք 4-ն են և յուրաքանչյուր հետազոտվողի մոտ առավել արտահայտված է լինում մեկը: Կամ, օրինակ, գնահատման համակարգում առանձնացնում են «գերազանց», «հարվածային¦ և «միջակ» խմբերը, որտեղ յուրաքանչյուր աշակերտ կամ ուսանող համապատասխանում է մեկ խմբի, սակայն յուրաքանչյուր խմբում կարող են լինել տարբեր առաջադիմությամբ հետազոտվողներ:

ԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՄ ՌԱՆԳԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ

Այս սանդղակին բնորոշ է հաջորդական բնույթը, որտեղ ցուցանիշները բաշխվում են ամենափոքրից մինչև ամենամեծը կամ հակառակը: Կարգային սանդղակը պետք է ունենա ամենաքիչը երեք դաս կամ ռանգ. «բարձր-միջին-ցածր», «դրական-չեզոք-բացասական», «կրտսեր-միջին-ավագ» և այլն…

Հոգեբանական մի շարք մեթոդներում կարող է առաջանալ կարգերով դասավորելու խնդիր, օրինակ. հետազոտվողները պետք է մասնագիտական կարևոր որակները դասավորեն ըստ կարևորության: Այս դեպքում կարգերի քանակը կլինի նույնքան, որքան որակներն են: Կամ կարող են ըստ նախընտրության դասավորվել արժեհամակարգի ցուցանիշները:

Դասերի մեծ քանակների դեպքում առաջանում է խմբավորման անհրաժեշտություն: Եթե հետազոտվողների քանակը ավելին է, քան ռանգերն են, կատարվում են տրոհումներ և նույն դասին կարող են պատկանալ հետազոտվողներ, որոնց համար չափվող հատկանիշների միջև կան տարբերություններ:

Կարգային սանդղակում չափման միավորը 1-ն է, սակայն տարածությունները կարգերի միջև կարող են իրարից տարբերվել: Ենթադրենք հետազոտության արդյունքում ունենք քանակական ցուցանիշներ, որոնք պետք է բերենք կարգային սանդղակի.

13, 7, 24, 17, 19, 20,

կստանանք 6 կարգանի շարք.

ըստ աճման՝ 2, 1, 6, 3, 4, 5 կամ ըստ նվազման՝ 5, 6, 1, 4, 3, 2:

ԻՆՏԵՐՎԱԼԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ

Ինտերվալային սանդղակը բնորոշվում է որոշակի քանակական մեծ կամ փոքր միջավայրով: Ինտերվալում արժեքները մեկը մյուսից հավասար հեռավորության վրա են ընկնում: Ինտերվալային սանդղակի յուրահատկությունն այն է, որ հաշվանքի սկիզբն այդ սանդղակում պայմանական է և չի որոշում չափվող հատկանիշի բացակայությունը: Հոգեբանական հետազոտությունների արդյունքներն ինտերվալի միջոցով ներկայացման համար՝ սահմանվում են հատուկ չափման միավորներ: Ինտերվալային սանդղակի օրինակ է «ստանդարտ տասնյակը»՝ ստենը, որը կիրառվում է Ռ. Քետտելի անձնային թեստի բալային հաշվարկում, որտեղ «հում» բալերի միջին թվաբանականի արժեքը համարելով հաշվարկի սկիզբ, աջից և ձախից գումարվում է 1/2 ստանդարտ շեղման արժեքը: Այնուհետև յուրաքանչյուր ինտերվալին վերագրվում է ստանդարտ միավորը. օրինակ, եթե հետազոտությունների արդյունքում թեստի որևէ գործոնի համար միջին արժեքը հաշվարկվել է 11.4, իսկ միջին քառակուսային շեղումը՝ 2.4, ապա ինտերվալային շարքը կլինի.

Աղյուսակ 1.1

Ինտերվալային շարքի օրինակ, որտեղ թեստային հում բալերը բերվում են ստանդարտի:

	5.4	6.6	7.8	9	10.2	12.6	13.8	15	16.2	17.4
Ինտերվալներ	0-5	6	7	8-9	10	11-12	13	14-15	16	17
Ստանդարտ բալ (sten)	1	2	3	4	5	6	7	8	9	10

ՀԱՐԱԲԵՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Հոգեբանական հետազոտություններում դժվար է հասնել հաշվանքի մաքուր, իդեալական սկզբին՝ բացարձակ զրոյին, այսինքն չենք կարող հետազոտության արդյունքում ունենալ կատարյալ արդյունք: Եթե մեկնաբանենք, կարող ենք ասել չկան բացարձակ խելոքներ և բացարձակ հիմարներ, կատարյալ շփվողներ և հակառակը: Եվ ինչպես թվերն են հարաբերում մեկը մյուսին (օրինակ 2-ը հարաբերում է 4-ին այնպես, ինչպես 4-ը՝ 8-ին), այդպես էլ շատ դեպքերում համեմատվում են հոգեբանական հետազոտությունների արդյունքում ստացված ցուցանիշները: Օրինակ կարող ենք ասել, որ տագնապի ցուցանիշը կիսով չափ ավելին է առաջին խմբում, քան հսկիչ խմբում էր:

1.3. ՀԻՄՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հետազոտվող հատկանիշը ընտրանքում ունի իր բնութագրական ներկայացումը: Նորմալ բաշխման պարագայում դա համապատասխանում է միջին թվաբանական մեծությանը՝ համապատասխան ստանդարտ շեղումով:

Հոգեբանական հետազոտություններում դժվար է անդրադառնալ յուրաքանչյուր ցուցանիշի նշանակությանը: Սովորաբար, երբ կատարվում է համեմատություն որևէ ցուցանիշով, ստացվում է, որ տվյալների մեծամասնությունը տատանվում է մի ցուցանիշի շուրջը, մնացածները բաժանվում են սիմետրիկ՝ ըստ քանակի միջին դեպի մեծագույն կամ փոքրագույն արժեքները: Միջին թվաբանական մեծությունը հաշվարկվում է թվային շարքը ներկայացնող արժեքների գումարային մեծությունից՝ հարաբերած քանակին, ինչին առավել մանրամասն կծանոթանանք հաջորդ բաժնում:

Բացի միջին արժեք մեծությունից, հետազոտական ընտրանքը կարելի է ներկայացնել Մոդայի և Մեդիանայի հաշվարկման միջոցով: ***Մոդան***, դա չափվող հետազոտական հատկանիշի այն արժեքն է, որն ունի հանդիպման ամենամեծ հաճախականությունը: Բաշխման դիսկրետ շարքում մոդան չենք կարող հաշվարկել, իսկ ինտերվալային շարքի համար այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M_o = X_o + h\frac{f_i - f_{i-1}}{(f_i - f_{i-1}) + (f_i - f_{i+1})} \qquad (1.1)$$

որտեղ՝

X_o – տվյալ ինտերվալի ստորին սահմանն է,

h – տվյալ ինտերվալի մեծությունն է,

f_i – տվյալ ինտերվալում պատահարների հաճախականությունը,

f_{i-1} – նախորդ ինտելվալում պատահարների հաճախականությունը,

f_{i+1} – հաջորդ ինտելվալում պատահարների հաճախականությունը:

Պարզ շարքի համար մոդան ակնհայտ է. օրինակ, եթե թվային շարքը բաղկացած է թեստային հետևյալ ցուցանիշներից՝

11 4 7 5 10 5 3 8 5 9

ապա մոդան՝ M_o=5:

Թվային հաջորդական շարքում կենտրոնական տենդենց հասկացությունը կարող է ներկայացվել **մեդիանայով**: Այն բաժանում է շարքը երկու մասի այնպես, որ հավասարապես մի կեսում լինեն իր արժեքից մեծ, իսկ մյուսում՝ փոքր թվային ցուցանիշներ: Եթե թվային շարքում ցուցանիշների քանակը կենտ է, ապա մեդիանան հանդես կգա հենց կենտրոնական արժեքով, իսկ եթե զույգ է՝ ապա այն կներկայացվի կենտրոնական երկու արժեքների միջինացված արժեքով: Օրինակ. եթե հետազոտական ընտրանքում ընդգրկվել են հավասարապես 18-ից մինչև 30 տարեկաններ, ապա կարող ենք ներկայացնել, որ տարիքային մեդիանան կազմել է 24:

Մեկ այլ թվային շարքի համար՝ 3 5 7 8 10 11, որպես կենտրոնական արժեք հանդես կգա 7,5-ը. Md=(7+8)/2=7,5:

Եթե գործ ունենք ինտերվալային շարքի հետ, ապա, նախ պետք է հստակեցնենք, թե որ միջակայքում է ընկած ծավալային առումով կեսը, այնուհետև մեդիանան կարող ենք հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$M_d = X_o + h\frac{\sum_{i=1}^{n} f_i - S_{n-1}}{f_n} \qquad (1.2)$$

որտեղ՝

X_o – տվյալ ինտերվալի ստորին սահմանն է,

h – տվյալ ինտերվալի մեծությունն է,

S_{n-1} –տվյալ ինտերվալին նախորդողի կուտակային հաճախականությունն է:

f_n – տվյալ ինտերվալում պատահարների հաճախականությունը:

Կենտրոնական տենդենցներից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունը և անհրաժեշտ է դա հաշվի առնել: Եթե հետազոտական տվյալները ներկայացված են անվանումներով, ապա բնական է, որ պետք է կենտրոնական արժեքի մասին խոսենք մոդայի կամ մեդիանայի ներկայացմամբ, ընդ որում, մոդան առավել ներկայանալի կլինի, եթե ունենանք առավել հանդիպող հաճախականություններ:

Կարող է պատահել այնպես, որ մոդան, մեդիանան և միջին արժեքը համընկնեն: Եթե հետազոտական տվյալները ներկայացված են կարգային սանդղակին համապատասխան, հաջորդաբար, ապա այս դեպքում, որքան բաշխվածության ասիմետրկությունը քիչ լինի, այնքան կենտրոնական նշանակությունները մոտ կլինեն:

Պետք է հիշել, որ կենտրոնական արժեքներով հետազոտվող գործոնը ներկայացնում ենք այն դեպքում, երբ այն միակն է որպես չափվող պատահական մեծություն: Երկու և ավելի հետազոտական գործոնների դրսևորումները և մեկնաբանությունները ներկայացնելու համար դիմում ենք մաթեմատիկական վիճակագրության այլ հասկացություններին:

1.4. ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՇՈՒՄ

Հոգեբանական հետազոտություններում քանակական արդյունքն ինքնին ոչինչ չի նշանակում: Օրինակ, նախադպրոցական տարիքի երեխայի կողմից ստացված բալը չի կարելի հասկանալ որպես համեմատաբար բարձր, միջին կամ ցածր զարգացվածության ցուցանիշ, քանզի այդ զարգացածությունն արտահայտված է չափման այնպիսի միավորներով, որոնք հատուկ են տվյալ մեթոդիկային: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է տիրապետել սկզբնական հաշվարկի համար նախատեսված տվյալներին և որոշակի խիստ չափանիշներին, որպեսզի դրանց միջոցով գնահատել հետազոտության արդյունքում ստացված անհատական և խմբային տվյալները: Հարց է առաջանում, թե ինչը վերցնել որպես հաշվարկի սկզբնակետ: Ավանդական թեստավորման մեջ այդպիսի սկզբնակետի հասնում են վիճակագրական ճանապարհով՝ դա, այսպես կոչված, վիճակագրական նորմն է:

Ընդհանուր առմամբ, վիճակագրական նորմի վրա կառուցված դիագնոստիկ մեթոդիկաների ստանդարտիզացումն իրականացվում է բավականաչափ մեծ ներկայացուցչական ընտրանքի միջոցով, որը սովորաբար անվանում են ստանդարտացման ընտրանք: Այդ խմբի փորձարկվողների վերաբերյալ ցուցանիշները, որպես նորմ մատնանշում են ոչ միայն մեթոդիկայի կատարման միջին մակարդակը, այլն հարաբերական փոփոխականությունը միջին մակարդակից ավելի բարձրի կամ ցածրի: Արդյունքում կարելի է գնահատել դիագնոստիկ փորձերի իրականացման հաջողությունը կամ անհաջողությունը: Դա թույլ է տալիս որոշել փորձարկվողի դիրքը նորմատիվ ընտրանքի համեմատությամբ: Վիճակագրական նորմերի հաշվարկման համար հոգեհիագնոստները դիմում են գիտության տարբեր բնագավառներում կիրառվող մաթեմատիկական վիճակագրական մեթոդներին:

Ենթադրենք հետազոտական երկու խմբերի մոտ ուսումնասիրվում է իրավիճակային տագնապայնության աստիճանը և անհատական տարբերությունները՝ կախված մասնագիտությունից (հումանիտար-տեխնիկական): Առաջին խմբին ցուցադրում են սարսափ ֆիլմ: Ընդհանուր հետազոտվողների թվաքանակը n=80 է: Յուրաքանչյուրի համար՝ n=40:

Այսպիսով աղյուսակի առաջին մասում նշվում է ընդհանուր հետազոտվողների թվաքանակը, երկրորդում՝ ազգանուն, անուն, հայրանունը կամ որևէ անվական կոդ: Սրանք տեղեկատվական, անկետային տվյալներ են:

Աղյուսակ 1.2

Անհատական տվյալների և թեստային ցուցանիշների գրանցման օրինակ:

N	Հետազոտ-վողներ	Մասնագ.	Խումբ	Տագնապայնություն	
				առաջ	Հետո
		1	***2***	***3***	***4***
1	X_1	0	0	45	44
2	X_2	1	0	65	67
3	X_3	1	0	59	60
4	X_4	1	1	56	75
…	…	…	…	…	…
80	X_{80}	0	1	47	55

Հետազոտվողների համար փոփոխականների թիվը չորսն է.

X_{1i}- մասնագիտությունը նոմինալ է

X_{2i}- խումբը նույնպես նոմինալէ

X_{3i}- տագնապայնությունը ֆիլմից առաջ կհամապատասխանի ինտերվալայինի

X_{4i}- տագնապայնությունը ֆիլմից հետո՝ նույնպես ինտերվալային

որտեղ i –ն փորձարկվողի հերթական համարն է, որը փոփոխվում է 1-ից մինչև 80:

Աղյուսակ 1.3

Թեստային ցուցանիշների բացարձակ, հարաբերական և կուտակային հաճախականությունների աղյուսակային ներկայացման օրինակ:

Թեստային ցուցանիշ	Բացարձակ հաճականություն	Հարաբերական հաճախականություն	Կուտակային հաճախականություն
20	0	0	0
21	1	0.0125	0.0125
…	…	…	…
55	18	0.225	0.45
56	20	0.25	0.7
…	…	…	…
79	1	0.0125	0.9875
80	0	0	1
Σ (գումար)	80	1	-

Բացարձակ և հարաբերական հաճախականությունները փոխկապակցված են հետևյալ կերպ.

$$f_o = \frac{f_a}{n} \qquad (1.3)$$

Որտեղ f_a-ն հատկանիշի որոշակի նշանակության բացարձակ հաճականությունն է, n-ը հետազոտվողների թվաքանակը, $f f_o$-ն այդ հատկանիշի նշանակության հարաբերական հաճախականությունն է: Բացարձակ հաճախականությունների գումարը հավասար է հետազոտվողների թվաքանակին- n, իսկ բոլոր հարաբերական հաճախականությունների գումարը՝ 1-ի: Կուտակային յուրաքանչյուր հաջորդ հաճախականությունը հաշվարկվում է նախորդի գումարով, որի արդյունքում նույնպես ստանում ենք 1:

Այն դեպքերում, երբ հատկանիշը կարող է ընդունել բազմաթիվ տարբեր արժեքներ, օգտագործվում են խմբավորված հաճախականությունների աղյուսակները, որտեղ հաճախականությունները խմբավորվում են ինտերվալային արժեքների հիման վրա: Օրինակ՝ չափում ենք թեստավորման ժամանակ հետազոտվողի՝ թեստից շեղվելու պատահարների քանակը (n=30): Նման դեպքում արդյունքները կարող են լինել շատ տարբեր: Ավելի արդյունավետ է արդյունքները ներկայացնել համախմբված հաճախականությունների աղյուսակով: Ենթադրենք առավելագույն շեղվածությունների քանակը եղել է 62, իսկ նվազագույնը` 20: Աղյուսակը ներկայացնելու համար անհրաժեշտ է.

1. որոշել տատանման շրջանակը,
2. որոշել բաժինների ցանկալի թվի և բաժինների միջև ինտերվալների չափը,
3. որոշել բաժինների սահմանները,
4. ամեն ինտերվալի համար հաշվարկել հատկանիշի հանդիպման հաճախականությունը:

Աղյուսակ 1.4

Թեստային ցուցանիշների խմբավորում և հաճախականությունների ներկայացում:

Ժամանակի ինտերվալ	Բացարձակ հաճականություն	Հարաբերական հաճախականություն	Կուտակային հաճախականություն
23-28	2	0.07	0.07
29-34	3	0.1	0.17
35-40	6	0.2	0.37
41-46	9	0.3	0.67
47-52	5	0.16	0.83
53-58	3	0.1	0.93
59-64	2	0.07	1
Σ (գումար)	30	1	-

Ինտերվալների քանակի ընտրությունը պայմանական է: Մեր օրինակի համար հաշվարկում ենք մեծագույն և նվազագույն արժեքների տարբերություն`64-23, այնուհետև պայմանականորեն բաժանում ենք այն 6-ի և հստակեցնում միջակայքերը: Որից հետո ունենում ենք յուրաքանչյուր ինտերվալում ցուցանիշի հանդիպման հաճախականությունը, ինչը բացարձակ հաճախականություն է և դրա օգնությամբ էլ հաշվարկվում ենք հարաբերական և կուտային հաճախականությունները:

Հետազոտական տվյալների ներկայացման այս ձևը կարելի է փոխարինել հիստոգրամով, ուր պարզ կերևա, թե ինչպես են խմբավորված ինտերվալային տվյալները բաշխվել.



Նկար 1. Նորմալ բաշխված տվյալների հիստոգրամով ներկայացնելու օրինակ:

Հիստոգրամը կարելի է ներկայացնել նաև կորի տեսքով, որից նույնպես կարելի է հասկանալ, թե որ ինչպիսինն է հետազոտվող հատկանիշի փոփոխականությունը, հատկապես որ ցուցանիշն է առավել հաճախ կամ հազվադեպ հանդիպում: Հոգեբանական հետազոտություններում հիմնականում հանդիպում ենք նորմալ բաշխվածության, ավելի ճիշտ՝ դրանցում գործում է բաշխվածության նորմալության օրենքը, որը հայտնագործվել է Գաուսի կողմից, 1809 թ., և հաճախ հենց իր անունով էլ կիրառվում է՝ Գաուսյան կոր:

Ինչպես նշել ենք նախորդ բաժնում, հոգեբանական հետազոտություններում դժվար է անդրադառնալ յուրաքանչյուր ցուցանիշի նշանակությանը: Սովորաբար, երբ կատարվում է համեմատություն որևէ ցուցանիշով, ստացվում է, որ տվյալների մեծամասնությունը տատանվում է մի ցուցանիշի շուրջը, մնացածները բաժանվում են սիմետրիկ՝ ըստ քանակի միջին դեպի մեծագույն կամ փոքրագույն արժեքները: Տվյալների ներկայացման համար նկարագրվում է բաշխման երկու ցուցանիշ՝ միջին թվաբանականը և ստանդարտ շեղումը, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևերով.

$$\bar{x} = \frac{\sum_{i=1}^{n} x_i}{n} \qquad (1.4)$$

որտեղ n-ը հետազոտվողների քանակն է, իսկ x_i-ն հետազոտվողների խմբի i-րդ անդամն է:

$$s = \sqrt{\frac{\sum_{i=1}^{n} (x - \bar{x})^2}{n-1}} \qquad (1.5)$$

Նորմալ բաշխումն ունի շատ առավելություններ, մասնավորապես այն թույլ է տալիս նախապես հաշվարկել, թե քանի դեպք կգտնվի միջին թվաբանականից որոշ հեռավորության վրա՝ ստանդարտ շեղման հեռավորությունը որոշելու նպատակով օգտագործելու ընթացքում: Այդ նպատակով գոյություն ունեն հատուկ աղյուսակներ, որոնցից պարզ է դառնում, որ միջին արժեք և ստանդարտ շեղման տարբերության և գումարի սահմաններում գտնվում են դեպքերի մոտավորապես 69%-ը, իսկ քանի որ բաշխումը սիմետրիկ է, ապա ամեն կողմից ծայրամասերում են բաշխվում մոտավորապես 13%-ը:

Բերենք օրինակ. ենթադրենք մեծահասակների և անչափահասների խմբերում չափվել է ուշադրության ծավալը Բուրդոնի թեստի միջոցով: Արդյունքների հիման վրա կառուցվել են հարաբերական հաճախականությունների բաշխման գրաֆիկներ առանձին մեծահասակների և անչափահասների համար: Համեմատելով գրաֆիկները կարելի է դատողություններ անել ինչպես արտահայտվածության աստիճանի, այնպես մեծահասակների և անչափահասների մոտ էլ անհատական տարբերությունների մասին: Այսպիսով մեծահասակները հիմնականում ունեն ուշադրության ավելի մեծ ծավալ, քան անչափահասները: Բայց անհատական տարբերություններով՝ ուշադրության ծավալը ավելի փոփոխական է անչափահասների մոտ:



Նկար 2. Մեծահասակների և անչափահասների ուշադրության ծավալների հարաբերական հաճախականությունների բաշխվածության օրինակ:

Նկարից երևում է, որ մեծահասակների համար սիմետրիան պահպանվում է, իսկ անչափահասների համար կորն ունի ասիմետրիա: Ասիմետրիայի ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$A = \frac{\sum_{i=1}^{n}\left(x_i - \overline{x}\right)^3}{n \cdot \sigma^3} \qquad (1.6)$$

Եթե A=0, ուրեմն բաշխման կորը սիմետրիկ է: Նախորդ օրինակում անչափահասների համար A<0, իսկ եթե A>0, ապա կորը կունենա թեքություն դեպի աջ: Տվյալների նման բաշխվածության հանդիպել ենք, օրինակ, երբ հետազոտում էինք անձի հոգեբանական անվտանգությունը թիրախ խմբերում.



Նկար 3. Անձի հոգեբանական անվտանգությունը թիրախ խմբերում (2010թ.):

Պատահում է, որ հոգեբանական հետազոտություններում ինչ-ինչ գործոններ նպաստում են, որ ցուցանիշները կենտրոնանան միջին արժեքի շուրջ, կամ էլ բաշխվեն մոտավոր հավասար քանակներով: Այս դեպքում բաշխվածության կորը բնութագրվում է «էքսցես» հասկացությամբ. սիմետրիկ կորի պարագայում E=0, եթե E<0, ապա կորը փռված է, իսկ թե E>0, ապա կորն ունի սրություն դեպի վերև: Այն դեպքում, երբ մեծ և փոքր արժեքները ունենում են մոտ քանակներ, կորն ունենում է երկու գագաթ:

Էքսցեսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$E = \frac{\sum\left(x_i - \overline{x}\right)^4}{n \cdot \sigma^4} - 3 \qquad (1.7)$$

Բերենք բաշխման կորի մի քանի օրինակներ, որտեղից տեսանելի կլինեն ասիմետրիայի և էքսցեսի նշանակությունները:





Նկար 4. Դրական և բացասական ասիմետրիաների և էքսցեսների օրինակներ (29, էջ 47):

Հոգեբանական հետազոտության արդյունքները հազվադեպ են լիովին համապատասխանում նորմալ բաշխման օրինաչափություններին: Դրա պատճառները պետք է փնտրել թեստերի էության մեջ, դրանց կատարման պայմանավորվածությունը հետազոտվողների պատրաստման գործընթացից:

Ստանդարտացման գործընթացի նշանակությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է ստեղծում համեմատության մեջ դնել տարբեր սանդղակներով չափված ցուցանիշները: Պատահում է, որ նույն հոգեբանական գործոնը հետազոտվում է տարբեր մեթոդներով և արդյունքները հաշվարկվում են տարբեր չափումների համար: Այս դեպքում, իհարկե, ավելի շատ դիմում են պարզագույն վերլուծությունների, ցուցանիշների տոկոսներով ներկայացմանը, բայց պետք է հաշվի առնել, որ հոգեմետրիկական պահանջների մեջ առաջին հերթին ընդգրկված են մաթեմատիկական վիճակագրության տարրերը: Մի կողմից դրանք նսեմացնում են անհատական ցուցանիշների յուրահատկությունները, իսկ մյուս կողմից նպաստում են օրինաչափությունների արագ բացահայտմանը, մեծ ընտրանքների համար չափման սխալի նվազեցմանը:

Ստանդարտիզացիայի գործընթացը հնարավորություն է տալիս տարբեր չափումներում ստացած տվյալները համեմատել մեկ ստանդարտ z սանդղակով: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$Z_i = \sigma \cdot \frac{x_i - \overline{x}}{s} + M \qquad (1.8)$$

Նշենք, որ z-ի յուրաքանչյուր արժեք հաշվարկվում է հետազոտվողների խմբի միջին արժեքի և ստանդարտ շեղման ցուցանիշներից, տեղափոխելով այն ստանդարտ սանդղակի՝ համապատասխան շեղման՝ համապատասխան շեղման և միջին արժեքի համար:

Ներկայացնենք թեստային Z-տեղափոխման սխեման, որում միջին ցուցանիշը զրո է, իսկ ստանդարտ շեղումը՝ մեկ:



Նկար 5. Նորմալ բաշխման ֆունկցիայի գրաֆիկական ներկայացում:

Եթե բաշխման ֆունկցիան նորմալ է, ապա դա նշանակում է, որ երկու ցուցանիշների միաջակայքերի և կորից ներքև մակերեսների միջև կա հետևյալ համապատասխանությունը. $M \pm \sigma$ մոտավորապես համապատասխանում է մակերեսի 68,3% -ին, $M \pm 2\sigma$ ՝ 95,4%-ին, իսկ $M \pm 3\sigma$ -ն՝ 99,7%-ին:

Որպեսզի պարզենք, թե որքանով է հետազոտական ցուցանիշների բաշխվածությունը համապատասխանում նորմալին, պետք է դիմենք ստուգման որևէ միջոցի: Գոյություն ունեն ստուգման տարբեր ձևեր. գրաֆիկական, երբ հետազոտակա ցուցանիշները դասավորվում են աբցիսների առանցքի վրա, իսկ դրանց համապատասխան տեսական նշանակությունները՝ օրդինատի: Եթե բաշխումը նորմալ է, ապա ստացված կետերը պետք է ներկայացնեն ուղիղ գիծ: Որքան կետերը մոտ լինեն ուղիղ գծին, այնքան բաշխումը կհամապատասխանի նորմալին:

Ստուգման մյուս եղանակը ասիմետրիայի և էքսցեսի չափանիշին դիմելն է: Բաշխման նորմալությունը հաստատվում է, եթե բանաձևերի հաշվարկումից հետո ստանում ենք 0-ին մոտ թիվ:

Սոցիալ-հոգեբանական հետազոտություններում կիրառական մեծ նշանակություն ունի Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշը, ըստ որի հաշվարկվում է հավանականությունն այն բանի, որ հետազոտական ընտրանքը պատկանում է գլխավոր համախմբությանը, որում տվյալները բաշխված են նորմալ: Եթե ստացված ցուցանիշը աղյուսակային նշանակությամբ գերազանցում է 0,05 հավանականությունը, ապա կարող ենք հավաստել նորմալ բաշխման մասին: Սակայն, շատ դեպքերում, եթե այդ հավանականությունը չի ապահովվում, դժվար է գտնել իրական պատճառը. *արդյո՞ք առակ է հետազոտվող հատկանիշի թվային նշանակության փոփոխականության համաչափությունը չափման սանդղակի տարբեր միջակայքերում:*

2. ԿՈՐԵԼՅԱՑԻՈՆ ԵՎ ՌԵԳՌԵՍԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Կոռելյացիան կամ կոռելյացիոն փոխկախվածությունը վերաբերում են երկու կամ ավելի չափվող մեծությունների փոխպայմանավորվածությանը, երբ դրանցից մեկի կամ մի քանիսի փոփոխությունն ընթանում է այլ մեծությունների փոփոխմամբ: Այն չափվում է կոռելյացիոն գործակցով, որն իրենից ներկայացնում է երկու փոփոխական մեծությունների փոխկախվածության քանակական չափը: Եթե որևէ մեծության (գործոնի) փոփոխությունը ոչ թե ուղեկցվում, այլ հանգեցնում է մեկ այլ մեծության փոփոխության, մենք չենք կարող խոսել կոռելյացիոն փոխկախվածության մասին: Այս դեպքում առկա է վիճակագրական կապ, սակայն այն չի կարող հանդիսանալ կոռելյացիոն [27, 36, 39]:

Վիճակագրական ընթացակարգում կոռելյացիոն գործակցի կիրառման նորարարը Ֆ. Հալտոնն է, ով փորձել է անհատական առանձնահատկությունների տվյալների վերլուծությունները ենթարկել գիտական հավաստման: Նա համագործակցել է մաթեմատիկոս Կ.Պիրսոնի հետ, որի կողմից մշակված գծային կոռելյացիոն գործակիցն այսօր, թերևս, գիտական հետազոտություններում ամենակիրառականներից է:

Հոգեբանական հետազոտություններում, եթե հետազոտվող գործոնները հանդես են գալիս որպես քանակական չափվող մեծություններ, ապա կարող ենք կատարել կոռելյացիոն փոխկախվածության հաշվարկում: Հակառակ դեպքում, երբ հետազոտական գործոնները ներկայացվում են անվանումների սանդղակով, ապա կատարվում է տարբերությունների կամ համադրությունների հետազոտում տարբեր չափանիշներով:

Կոռելայցիոն գործակիցը կարող է հավաստել մեծությունների միջև ուղիղ և հակադարձ փոխկախավածությունները, ինչպես նաև դրանց բացակայությունը: Կոռելյացիոն ուղիղ (դրական) կախվածությունը ցույց է տալիս, որ երկու չափվող մեծությունների արժեքները հանդես են գալիս համատեղ բարձր կամ ցածր նշանակություններով: Հակադարձ (բացասական) կախվածությունը ցույց է տալիս, որ նրանցից մեկի բարձր արժեքներին համապատասխանում են մյուսի ցածր արժեքները.



Պետք է հիշել որ երկու մեծությունների միջև հաշվարկված կոռելյացիոն գործակիցը՝ փոխկախվածության չափը, գրանցում է միայն նրանց միջև առկա վիճակագրական կապը, այլ ոչ թե բացահայտում պատճառահետևանքային կապեր:

2.2. ԳԾԱՅԻՆ ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ՊԻՐՍՈՆԻ ԳՈՐԾԱԿԻՑ

Երկու հատկանիշների միջև կոռելյացիոն կապը, ըստ էության բնութագրում է նրանով, որ հատկանիշներից մեկի որոշակի արժեքին համապատասխանում է մյուս հատկանիշի այնպիսի արժեքներ, որոնք փոփոխվում են միջին արժեքի շուրջ: Օրինակ, եթե բարձր առաջադիմությամբ սովորողների մոտ հետազոտվում է ինտելեկտի գործակցի որևէ դրսևորում, ապա ոչ բոլորի մոտ այն հանդես կգա մեծագույն արժեքով: Սակայն, չենք կարող ժխտել, որ գոյություն ունի որոշակի օրինաչափություն բարձր ինտելեկտուալ ընդունակությունների և ուսման մեջ ունեցած հաջողությունների միջև: Նմանատիպ կապերը կոռեկյացիոն վերլուծության իմաստ են կրում: Ընդ որում, երբ հետազոտվող հատկանիշներից մեկի փոփոխությունն ընթանում է մյուսի՝ միջին նշանակության համաչափությամբ, ուրեմն գործ ունենք գծային կոռելյացիոն փոխկապակցվածության հետ: Փոխկապակցվածության չափը վիճակագրության մեջ անվանում են կովարիացիա: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Cov(x,y)=\frac{\sum_{i=1}^{n}(x_i-\overline{X})(y_i-\overline{Y})}{n-1} \qquad (2.1)$$

Պիրսոնի գծային կոռելյացիոն գործակիցը հաշվարկվում է կովարիացիայի և համապատասխան ստանդարտ շեղումների հարաբերությամբ.

$$r=\frac{\sum_{i=1}^{n}(x_i-\overline{X})(x_i-\overline{Y})}{(n-1)\cdot\sigma_x\cdot\sigma_y} \qquad (2.2)$$

կամ, արդեն բացված տեսքով՝

$$r=\frac{\sum_{i=1}^{n}(x_i-\overline{X})(y_i-\overline{Y})}{\sqrt{\sum_{i=1}^{n}(x_i-\overline{X})^2\sum_{i=1}^{n}(y_i-\overline{Y})^2}} \qquad (2.3)$$

Փորձենք օրինակի վրա հաշվարկել կոռելյացիոն գործակիցը, երբ հետազոտվողների քանակը՝ n=9: Այս փոքր քանակը, ուսումնական նպատակով, վերցված է հետազոտական մեծ խմբից, որպեսզի ներկայացնենք գործակցի կիրառությունը:

Ունենք թվային երկու շարքեր, որոնք ստացվել են հետազոտական խմբի թեստային ցուցանիշներից. չափել ենք անձի հոգեբանական անվտանգության ցուցանիշը առողջության բնագավառում (X) և հուզական տոնուսի ցուցանիշը (Y) հետազոտական նույն խմբում:

Նախապես հաշվարկում ենք յուրաքանչյուր շարքի միջին արժեքը, ինչը հեշտությամբ կարող ենք անել նաև Excel էլեկտրոնային միջավայրում, ընտրելով *fx* ֆունկցիոնալ ցանկից *average* – միջին արժեքի հաշվարկման համար նախատեսված անվանումը: Այնուհետև լրացնում ենք ստորև բերված աղյուսակի 3-րդ, 4-րդ և 5-րդ տողերը:

1	X	x_1	x_2	x_3	x_4	x_5	x_6	x_7	x_8	x_9
		3	9	4	8	4	9	8	8	8
2	Y	y_1	y_2	y_3	y_4	y_5	y_6	y_7	y_8	y_9
		4	6	5	6	6	7	6	9	9
3	$X_i - \overline{X}$	-3,8	2,2	-2,8	1,2	-2,8	2,2	1,2	1,2	1,2
4	$Y_i - \overline{Y}$	-2,4	-0,4	-1,4	-0,4	-0,4	0,6	-0,4	2,6	2,6
5	$(X_i - \overline{X})(Y_i - \overline{Y})$	8,6	-1,2	4,33	-0,68	1,48	0,95	-0,6	4,5	2,44

ՍՏՈՒԳՈՒՄ. - Ճիշտ հաշվարկման դեպքում յուրաքանչյուր շարքի համար միջինների տարբերության գումարային արժեքը պետք է կազմի 0, այսինքն տվյալ աղյուսակի 3-րդ և 4-րդ տողերից յուրաքանչյուրի համար գումարը պետք է լինի զրո:

Կոռելյացիոն գործակցի հաշվարկման համար, բացի 5-րդ շարքի գումարը հաշվելուց, պետք է հաշվարկենք նաև յուրաքանչյուր թվային շարքի ստանդարտ շեղումը՝ համապատասխանաբար՝ σ_x, σ_y: Դա հեշտությամբ կարող ենք հաշվարկել Excel էլեկտրոնային միջավայրում, ընտրելով *fx* ֆունկցիոնալ ցանկից *stdev* – ստանդարտ շեղման հաշվարկման համար նախատեսված անվանումը (*ծրագրային ապահովման այլ ֆունկցիոնալ հնարավորությունների հետ կարող եք ծանոթանալ գլուխ 7-ում*):

Մեր օրինակի համար հետազոտվողների քանակը 9-է, n-1=8: Արդեն ունենք բոլոր տվյալները բանաձևի հաշվարկման համար: Տեղադրենք դրանք բանաձևում.

$$r = \frac{\sum_{i=1}^{n}(x_i - \overline{X})(x_i - \overline{Y})}{(n-1)\cdot\sigma_x\cdot\sigma_y} = \frac{19,9}{8\cdot 2,38\cdot 1,67} \approx 0,63$$

Այս դեպքում ունենք արտահայտված փոխկապակցվածություն: Կեռլյացիոն գործակիցը կարող է տատանվել -1-ից 1 միջակայքում: Հաշվարկված 0,7 գործակիցը համեմատվում է աղյուսակային նշանակության հետ (հավելված, աղյուսակ 2): 5% հավանական սխալի չափով, այսինքն 0,05 նշանակալիությամբ, ստացված գործակիցը հավաստում է երկու թվային շարքերի միջև կոռելյացիոն կապի մասին:

2.3. ՌԵԳՐԵՍԻՈՆ ԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Կոռելյացիոն գծային կախվախծությունը վկայում է, թե որքանով է երկու թվային շարքերի համար մեծությունների փոփոխությունը համաչափ: Եթե այն ներկայացնենք x և y փոփոխականներով, ապա կստացվեն ցրված կետեր, որոնք կոռելյաիցիոն ուժեղ կապի դեպքում կունենան որոշակի կենտրոնացվածություն մեկը մյուսի հանդեպ: Ընդ որում դրանք կլինեն ցրված դեպի վեր՝ ուղիղ կապի դեպքում դեպքում, եթե գործակցի արժեքը դրական է և վերևից դեպի ներքև՝ գործակցի բացասական արժեքի դեպում: Նման կախվածությունը նաև կարելի է ստանալ ուղիղ գծով, ըստ թեքության աստիճանի: Այն կոչվում է ռեգրեսիայի գիծ: Ռեգրեսիայի գծի կառուցումն ուղեկցվում է հետևյալ փուլերով. Նախապես հաշվարկվում են թվային շարքերի համար միջին արժեքների և ստանդարտ շեղման ցուցանիշները: Նաև հաշվարկում ենք կոռելյացիոն r_{xy} գործակիցը: Սովորաբար, գծի կառուցման համար կիրառում ենք գծային կախվածության պարզագույն բանաձևը. *y=ax+b* : x և y թվային շարքերի i-իդ փոփոխականի համար ռեգրեսիոն գծի կառուցման հաշվարկները կատարում ենք ստորև բերված հավասարումով, որտեղ a-ն ազատ անդամն է, իսկ b-ն այն գործակիցն է, ըստ որի որոշվում է գծի թեքության աստիճանը:

$$y_i' = bx_i + a \qquad (2.4)$$

b-ն որոշվում է կոռելյացիոն գործակցի և ստանդարտ շեղումների հարաբերության արտադրյալով՝ $b = r_{xy}\dfrac{\sigma_x}{\sigma_y}$, իսկ a-ն որոշվում է b-ի հաշվարկից հետո, միջին արժեքների տարբերությամբ՝ $a = \overline{y} - b\overline{x}$:



Նկար 6. Ռեգրեսիայի գծի օրինակ:

Տեսականորեն, կարող ենք ասել, որ, եթե r_{xy}=0, ապա b=0, իսկ ռեգրեսիոն գործակիցը համընկնում է y-ների թվային շարքի միջին արժեքի հետ: Եթե r_{xy}=1, ապա ռեգրեսոհին գիծը կունենա 45° թեքություն, իսկ r_{xy}=-1-ի դեպքում՝ նույն թեքությունը՝ հակառակ ուղղությամբ:

Այսպիով, կարող ենք ասել, որ ռեգրեսիոն գիծը այն ուղիղն է, որից ցրվածության կետերի գումարային հեռավորությունը նվազագույնն է, ինչը կառուցվում է «նվազագույն քառակուսիների» մեթոդով:

2.4. ՌԱՆԳԱՅԻՆ ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՍՊԻՐՄԵՆԻ ԵՎ ՔԵՆԴԵԼԻ ԳՈՐԾԱԿԻՑ

Ռանգային կոռելյացիոն վերլուծությունը կիրառվում է թվային այնպիսի շարքերի համար, որոնք ունեն հաջորդական դասավորություն, այսինքն ռանգավորված են: Նման շարքեր կարող են լինել, օրինակ, հետազոտական խմբում չափվող երկու հատկանիշների, կամ երկու տարբեր խմբերում չափվող նույն հատկանիշի ցուցանիշներից ստացված շարքերը: Ռանգային կոռելյացիոն գործակցի հաշվարկից առաջ պետք է ցուցանիշները ռանգավորել, տալով, օրինակ, ամենքփոքրին՝ նվազագույն ռանգը: Թվային երկու շարքերը պետք է լինեն սանդղակավորված նույն չափի մեջ և ցանկալի է, որ նվազագույն քանակը լինի հինգից ավելին:

Ռանգային կոռելյացիոն գործակիցը ցույց է տալիս, թե զուգահեռ դասավորված ցուցանիշների դասերը որքանով են իրար համապատասխանում: Օրինակ, ենթադրենք հետազոտվողը դասակարգել է, թե որքանով են կարևոր անձի հոգեբանական անվտանգության համար՝ բերված ոլորտները Y(Ընտանիք, Առողջություն, Ընկերներ, Աշխատանք, Տեղեկատվություն, Էկոլոգիա, Հասարակություն, Իրավունք, Մշակույթ): Այնուհետև նրան խնդրել ենք, որ նույն ոլորտների համար դասակարգի, թե որքանով է ինքն իրեն անվտանգ զգում յուրաքանչյուր ոլորտում և ըստ դրա դասակարգի նույն ոլորտները(X): Ընդ որում, այս դեպքում ռանգավորումը կատարվել է հետևյալ կերպ. կարևորագույնին տրվում է սկբնական ռանգը: Ստացված երկու ռանգավորված X և Y շարքերի միջև կարող ենք հաշվարկել կոռելյացիոն կապ՝ գտնելով զուգահեռ դասավորված ռանգերի տարբերությունները:

Նշենք, որ ռագային կոռելյացիոն գործակիցը հայտնի է *r-Սպիրմենի* անունով.

$$\rho = 1 - \frac{6\sum_{i=1}^{n} d_i^{\,2}}{n(n^2-1)} \qquad (2.5)$$

որտեղ՝

n-ը դասերի քանակն է,

d_i-ն երկու դասերի միջև տարբերությունը:

Փորձենք վերոնշյալ օրինակի համար հաշվարկել բանաձևը.

Աղյուսակ 2.2

Ոլորտներ	X	Y	d_i - ռանգերի տարբերություն	d_i^2 – ռանգերի քառակուսային տարբերություն
Ընտանիք	2	1	1	1
Առողջություն	1	4	-3	9
Ընկերներ	5	2	3	9
Աշխատանք	3	3	0	0
Տեղեկատվություն	6	9	-3	9
Էկոլոգիա	4	6	-2	4
Հասարակություն	9	8	1	1
Իրավունք	8	5	3	9
Մշակույթ	7	7	0	0
ԸՆԴ.	-	-	**0**	**42**

$$\rho = 1 - \frac{6\sum_{i=1}^{n} d_i^{2}}{n(n^2-1)} = 1 - \frac{6\cdot 42}{9(81-1)} \approx 0,65$$

n=9 –ի համար աղյուսակային նշանակությունը հետևյալն է (հավելված, աղյուսակ 2).

$p \le 0,05$ – $\rho = 0,666$

$p \le 0,01$ - $\rho = 0,798$

Այս դեպքում, կարող ենք հավաստել, որ 0,05 հավանականությամբ կամ 5% սխալի չափով, անձի հոգեբանական անվտանգության ցուցանիշը տվյալ հետազոտվողի համար ունի աղեկվատություն: Եթե գործակիցը լիներ ավելի արտահայտված, կապը կլիներ ավելի սերտ:

Ռանգային կոռելյացիայի գծապատկերային ներկայացումը ունի հետևյալ տեսքը (34, էջ 211).



Կոռելյացիոն ուղիղ կապ



հակադարձ կապ



0-ական կապ

Նկար 7. Ռանգային կոռելկյացիոն ուղիղ, հակադարձ և զրոյական կախվածություններ:

Պետք է հիշել, որ r-Պիրսոնի և r-Սպիրմենի կոռելյացիոն գործակիցները կարող են թվային նույն շարքի համար ունենալ որոշակի տարբերություններ: Այդ իսկ պատճառով դրանց կիրառությունը պետք է բխի հետազոտական տվյալներից և դրված նպատակից:

Ռանգային կոռելյացիայի Սպիրմենի բանաձևն ունի լայն կիրառություն ինքնագնահատականի, արժեհամակարգի և այլ հոգեբանական հատկանիշների չափմանն ուղղված մեթոդիկաներից ստացված տվյալների վերլուծության համար, նաև այն դեպքերում, երբ անհրաժեշտ է որոշակի հատկանիշների համար ուսումնասիրել նախընտրությունների, գերակայությունների փոխկապակցվածություններ:

ՔԵՆԴԵԼԻ ԳՈՐԾԱԿԻՑ

Քնեդելի կողմից առաջարկվում է ռանգային կոռելյացիոն վերլուծության մեկ այլ մոտեցում, երբ երկու ռանգային շարքերի համար կատարվում է ցուցանիշների համեմատություն զույգերով: Մոտեցման հիմնական էությունը կայանում է նրանում, թե ինչպես է X-ի նշանակության փոփոխությունը համընկնում Y-ի փոփոխության հետ. եթե երկուսն էլ փոփոխվում են նույն ուղղությամբ, օրինակ աճում կամ նվազում են մյուս զույգերի հանդեպ, ապա առկա է ուղիղ, դրական փոխկապակցվածություն, իսկ եթե ուղղությունները հակադարձվում են՝ բացասական կապակցվածություն: Հաշվարկները սկսելու համար նպատակահարմար է շարքերից մեկը դասակարգել:

$$\tau = \frac{P-Q}{n(n-1)/2} \qquad (2.6)$$

P -ն իրենից ներկայացնում է համապատախանությունների հաճախականությունը, իսկ Q -ն՝ հակադարձումներինը: Այսինքն P–ն արդեն հաջորդաբար կարգերի բերված X-երի շարքի հանդեպ Y-ների շարքում տվյալ ռանգից բարձր կարգերի քանակն է, իսկ Q-ն՝ նրանից ցածր դասավորվածներինը:

Փորձենք կատարել հաշվարկները կոնկրետ օրինակի վրա, երբ n=9:

Աղյուսակ 2.3

n	X-երի շարք	Y- ների շարք	Համապատասխանություններ (P)	Հակադարձումներ (Q)	Ստուգում $P+Q$
4	1	4	6	3	9
6	2	5	5	3	8
9	3	1	7	0	7
5	4	3	5	1	6
10	5	9	1	4	5
3	6	2	4	0	4
2	7	10	0	3	3
1	8	6	2	0	2
8	9	7	1	0	1
7	10	8	0	0	0

$$P+Q = 31+14=45$$

$$P+Q = n(n-1)/2=10(10-1)/2=45$$

Հաշվարկի ստուգումը կատարված է, կարող ենք անդրադառնալ բանաձևին.

$$\tau = \frac{P-Q}{n(n-1)/2} = \frac{31-14}{45} = \frac{17}{45} \approx 0{,}38$$

Ստացված τ -Քենդելի գործակիցը համեմատվում է աղյուսակային նշանակության հետ: Պետք է նշել, որ այս գործակցի կիրառությունն այնքան էլ մեծ չէ, այն համարվում է այլընտրանքային և հետազոտվողների քանակի աճման հետ գործակցի հաշվարկային ծավալն ավելանում ոչ թե համաչափ, այլ երկրաչափական պրոգրեսիայով:

2.5. ՈՐԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մինչ այժմ ներկայացված գործակիցները կիրառում էինք թվային շարքերի համար, որտեղ ցուցանիշները կարող էին ներկայացվել մետրիկական կամ ռանգային սանդղակներով: Այժմ փորձենք պարզել, թե մաթեմատիկական վիճակագրության ինչպիսի մեթոդներով կարող ենք կատարել վերլուծություններ և մեկնաբանություններ, երբ գործ ունենք որակական հատկանիշների հետ, որոնք ներկայացվում են անվանումների կամ նոմինալ սանդղակով: Որակական հատկանիշների մշակման ժամանակ դժվար է դիմել չափման միավորի կամ դիմել վարիացիոն շարքի: Այս դեպքում նպատակահարմար է հատկանիշները խմբավորելը, դրանք դիտարկել, օրինակ ըստ առկայության կամ բացակայության, ստանալ համապատասխան քանակներ:

ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Որակական հատկանիշների կոռելյացիոն վերլուծության ժամանակ արդյունավետ կիրառվում է բինար կամ երկարժեք փոփոխականների գործակիցը, որը նաև անվանում են «համակցման գործակից»:

Բինար փոփոխականների կոռելյացիոն φ գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\varphi = \frac{ad - bc}{\sqrt{(a+b)(c+d)(a+c)(b+d)}} \qquad (2.7)$$

Այս գործակցի հաշվարկման համար կառուցվում է քառավանդակ աղյուսակ a,b,c և d քանակների համար, որտեղ յուրաքանչյուրը ստացվում է երկու հատկանիշների դրսևորման համակցումից:

Աղյուսակ 2.4

Բինար գործակցի քառավանդակ աղյուսակ:

	X	

		1(բարձր)	0(ցածր)	ընդ.
Y	1(բարձր)	a	b	a+b
	0(ցածր)	c	d	c+d
	Ընդ.	a+c	b+d	քանակ

Դիմենք օրինակի. ուսանողների մոտ անձի հոգեբանական անվտանգության բաղադրիչներից մեկի՝ Աշխատանքի, բարձր և ցածր ցուցանիշները համակցվել են առաջադիմության հետ: Մեր հետազոտություններում Աշխատանք բաղադրիչը ուսանողների համար փոխարինվել է ուսումնական գործունեությամբ: Այսինքն, X-երի շարքի համար ծառայել են անվտանգության ցուցանիշները, իսկ Y-ների համար՝ առաջադիմությունը: Ընդ որում բարձր ցուցանիշներին վերագրվել է «1», իսկ ցածրերին՝ «0»:

n	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27
X	1	1	1	1	1	0	0	1	0	0	1	1	1	1	0	1	0	1	0	1	0	0	1	1	0	1	1
Y	1	1	1	0	0	1	0	0	0	0	1	0	1	1	0	1	1	1	0	1	0	1	1	1	0	1	0

n-ը ուսանողների քանակն է (n=27):

Ստացվում են հետևյալ խմբավորումները.

a – երբ X և Y շարքերում հատկանիշները հանդես են գալիս բարձր ցուցանիշներով,

b - երբ X-երի շարքի համար ցուցանիշը ցածր է, իսկ Y-ի համար՝ բարձր,

c - երբ X-երի շարքի համար ցուցանիշը բարձր է, իսկ Y-ի համար՝ բարձր,

d - երբ X և Y շարքերում համապատասխան հատկանիշները հանդես են գալիս բարձր ցուցանիշներով,

Կառուցենք համակցման աղյուսակը:

X

		1	0	Ընդ.
Y	1	12	1	13
	0	7	7	14
	Ընդ.	19	8	27

Հաշվարկենք համակցման գործակիցը երկարժեք փոփոխականների համար.

$$\varphi = \frac{ad - bc}{\sqrt{(a+b)(c+d)(a+c)(b+d)}} = \frac{12\cdot 7 - 1\cdot 7}{\sqrt{13\cdot 14\cdot 19\cdot 8}} \approx 0{,}46$$

Հետազոտական տվյալ խմբում ստացվում է բավարար կոռելյացիոն կապ. այն է՝ ուսմնական գործունեության հանդեպ ունեցած ապահովություն, բավարարվածություն ունեցող ուսանողների մոտ բարձր առաջադիմությունն ավելի հավանական է:

Երբ $b \to 0, c \to 0$, ապա $\varphi \Rightarrow 1$, այսինքն ստանում ենք ուժեղ կոռելյացիոն փոխկապակցվածություն:

3. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԿԱԾ: ՎԱՐԿԱԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հետազոտական որևէ խնդիր լուծելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում այն ներկայացնել հստակ ձևակերպումով և հետազոտության իրականացման ամբողջ ընթացքում առաջնորդվել նրանով: Վիճակագրական վարկածը լինում է զրոյական և այլընտրանքային, ուղղուրդված և ոչ ուղղորդված [34, էջ 24]: Զրոյական վարկածը կարող է վերաբերել հետազոտվող հատկանիշների տարբերության բացակայությանը, այսինքն երբ դրանց միջև տարբերությունը հավասար է 0-ի: Այլընտրանքային վարկածը դրվում է հատկանիշների էական, նշանակալի տարբերության առկայության դեպքում: Պայմանականորեն զրոյական վարկածը նշանակում ենք H_0, իսկ այլընտրանքայինը՝ H_1: Երբ հետզոտվում է որևէ հատկանիշի նշանակության գերազանցումը մյուսից, ապա առաջ է քաշվում ուղղորդված վարկված: Իսկ եթե այդ տարբերությունը պայմանավորված է բաշխվածության տարբեր ձևերով, ապա առաջ է քաշվում ոչ ուղղորդված վարկած:

Հոգեբանական հետազոտություններում, հատկանիշները որպես փոփոխականներ դիտարկելով, կարող ենք առնչվել անկախ և կախյալ փոփոխականների հետ: Երբ հետազոտության ընթացքում ուսումնասիրվում է դրանցից մեկի ազդեցությունը մյուսի վրա, այդ դեպքում առաջինը հանդես է գալիս որպես անկախ փոփոխական: Այն կարելի է դիտարկել որպես ազդակ (ստիմուլ), որի փոփոխության արդյունքում հետազոտվում են համապատասխան հակազդումները (ռեակցիա): Վերջիններս էլ հանդիսանում են կախյալ փոփոխականներ [2]:

Վիճակագրական վարկածը կարող են դասակարգել ըստ նշանակությունների տարբերության և ըստ ուղղորդվածության:

Վիճակագրական վարկածները հաստատվում կամ հերքվում են պարամետրական և ոչ պարամետրական չափանիշներով: Փորձարարական ճանապարհով հաշվարկված չափանիշների արժեքները համեմատվում են կրիտիկական նշանակությունների հետ՝ համապատասխանաբար 0,05 և 0,01 նշանակալիությամբ:

Ներկայացնենք նշանակալիության թույլատրելի տիրույթները.



- p>0,05 – երբ փորձարարական նշանակությունը գերազանցում է նշված հավանականությունը, այսինքն նույն արդյունքը կարող է տարածվել գլխավոր համախմբության ընտրանքների համար 5%-ից բարձր սխալի չափով, ապա առաջ քաշված ենթադրությունը գտնվում է ոչ նշանակալի տիրույթում:
- p≤0,05 – երբ փորձարարական նշանակությունը չի գերազանցում նշված հավանականությունը, այսինքն նույն արդյունքը կարող է տարածվել գլխավոր համախմբության ընտրանքների համար 5% սխալի չափով, ապա առաջ քաշված ենթադրությունը չի հերքվում, բայց մնում է անորոշության տիրույթում:
- p≤0,01 – երբ փորձարարական նշանակությունը չի գերազանցում նշված հավանականությունը, այսինքն նույն արդյունքը կարող է տարածվել գլխավոր համախմբության ընտրանքների համար 1%-ի սխալի չափով, ապա առաջ քաշված ենթադրությունը հաստատվում է:

3.1. ԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Ինչպես նշել ենք առաջին բաժնում, տեսականորեն մենք կարող ենք խոսել հետազոտական ցուցանիշների կատարյալ նորմալ բաշխման մասին, սակայն գործնական, փորձարարական ճանապարհով դրանք կարող են ունենալ տարբեր բաշխվածություններ: Բաշխման ֆունկցիաները կարող են տարբերվել միջին արժեքներով, ստանդարտ շեղումներով, ասիմետրիայով և էքսցեսով: Այդ պատճառով պետք է կատարել վիճակագրական վերլուծություններ և պարզել, թե որքանով են դրանք թույլատրելի հետազոտական տվյալները նորմալ բաշխման պարամետրերով ներկայացնելու համար: Օրինակ, եթե հետազոտվողները բարդ առաջադրանքների կատարման համար ծախսում են երկար ժամանակ, իսկ պարզերը կատարում են արագ, և երկու դեպքում էլ ցուցանիշները բաշխվում են նորմալ, ապա կարելի է առաջ քաշել գիտական նոր ենթադրություն. հետազոտվողների որ խմբի մոտ է արտահայտված հաջողության հասնելու մոտիվացիան [34, էջ 112]:

Սովորաբար փորձարարական ճանապարհով ստացված հետազոտական ցուցանիշների համար նպատակահարմար է ստուգել բաշխվածության համապատասխանությունը նորմալին և վերլուծությունների համար կիրառել պարամետրական մեթոդներ և չափանիշեր: Հոգեբանական հետազոտություններում բաշխման ֆունկցիաների տարբերությունների բացահայտման համար մաթեմատիկական վիճակագրության մեթեդներից հիմնականում կիրռում են Պիրսոնի χ^2 չափանիշը, որը նշանակալի է մեծ ընտրանքների համար:

3.2. ՀԱՄԱԿՑՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ χ^2 ՉԱՓԱՆԻՇ

Հետազոտական տվյալների վերլուծությունները կատարվում են դասակարգման, խմբավորման, համակցման կամ հակադրման ճանապարհով: Երբ դրվում է խնդիր հետազոտելու որևէ նախընտրության պայմանավորվածություն ինչ-որ գործոնով, ապա նպատակահարմար է դիմել համակցման աղյուսակների ստացմանը: Դրանքկիրառելի են նաև այն դեպքում, երբ համեմատվում են երկու շարքերի բաշխումները կամ երբ ստուգվում է կապը շարքերի միջև՝ պայմանավորված նոմինատիվ հատկանիշներով: Համակցման չափանիշն ունի հետևյալ տեսքը.

$$\chi^2 = \sum_{i=1}^{k-1} \frac{(f_e - f_t)^2}{f_t}, \qquad (3.1)$$

f_e, f_t - համապատասխանաբար փորձարարական և տեսական հաճախականություններն են,

$f_{ij} = \dfrac{f_i \cdot f_j}{n}$, $f_i\, f_j$ i-րդ և j-րդ հաճախականություններ

$$df = (k-1)(l-1)$$

k-ն տողերի քանակն, l-ն՝ սյուներինը:

Ենթադրենք ուսանողների խումբը կամընտրական 2 առարկաներից կատարել են հետևյալ ընտրությունը (n=60).

Աղյուսակ 3.1

	Փորձարարական	Տեսական
Առարկա 1	25	30
Առարկա 2	35	30
Ընդ.	60	60

Կատարենք հաշվարկն ըստ չափանիշի, ընդ որում`

$$df = (k-1)(l-1) = 1$$

$$\chi^2 = \sum_{i=1}^{k-1} \frac{(f_e - f_t)^2}{f_t} = \frac{(25-30)^2}{30} + \frac{(35-30)^2}{30} \approx 1{,}67$$

Ըստ աղյուսակային նշանակության (հավելված, աղյուսակ 7-ում), առարկաների համար նախաընտրության նշանակալիություն չի բացահայտվում, այդ իսկ պատճառով հավաստի ենթադրություն կատարել չի կարելի, թեպետ տեսանելի տարբերությունը երևում է:

Նշենք, որ Պիրսոնի χ^2 չափանիշով հաշվարկները կատարվում են նաև հատկանիշի դրսևորման տարբեր՝ երկուսից ավելի մակարդակների (градация) համար:

4. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

4.1.ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Երկու թվային շարքի, կամ, ինչպես հոգեբանական հետազոտական լեզվով ասած՝ հետազոտական երկու խմբերի/խմբի երկու ցուցանիշների, միջին արժեքների միջև գոյություն ունեցող էական տարբերությունների մասին ենթադրությունը կարող է հաստատվել կամ հերքվել մաթեմատիկական վիճակագրության մեջ հայտնի Ստյուդենտի t չափանիշի օգնությամբ: Պետք է հիշել, որ միջին արժեքների համեմատության այս չափանիշի նշանակալիության համար պետք է ունենալ մեծ ընտրանքներ, երբ հետազոտվողների թիվը գերազանցում է երեսունը: Նաև պետք է ունենալ համոզվածություն, որ տվյալները ընտրանքներում ունեն համաչափ, նորմալին մոտ բաշխվածություն:

Ստյուդենտի չափանիշի կիրառման համար պետք է նախապես հաշվարկել թվային շարքերի միջին արժեքները և դիսպերսիաները՝ միջին քառակուսային շեղումները: Շատ հաճախ Ստյուդենտի չափանիշն օգտագործվում է ոսկիչ և փորձարարական խմբերի միջին արժեքների համեմատության համար, երբ անհրաժեշտ է գիտականորեն հաստատել կամ հերքել այդ շարքերի տաբերությունը:

4.1.1. ՄԻՋԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՆԿԱԽ ԵՎ ԿԱԽՅԱԼ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Նշենք, որ չափանիշը կիրառելի է անկախ և կախյալ խմբերի համար: Անկախ խմբերի միջև տարբերության հավաստման համար առաջարկվող բանաձևն ունի հետևյալ տեսքը.

$$t = \frac{|\overline{x} - \overline{y}|}{\sqrt{\sigma_x{}^2 / n_1 + \sigma_y{}^2 / n_2}} \qquad (4.1)$$

որտեղ՝

n_1-ը առաջին խմբի հետազոտվողների քանակն է,

n_2-ը երկրորդ խմբինը,

$\overline{x}$ -ը և $\overline{y}$ -ը համապատասխանաբար երկու խմբերի միջին ցուցանիշները,

$\sigma_x{}^2$-ը և $\sigma_y{}^2$-ը համապատասխանաբար երկու խմբերի դիսպերսիաները:

Նշված բանաձևով ստացված արժեքը աղյուսակային նշանակության հետ համեմատելու համար պետք ազատության աստիճանը՝ *df*-ը հաշվարկենք n_1+n_2-2 քանակներով:

Ներկայացնեն Ստյուդենտի չափանիշի կիրառման օրինակ. անձի հոգեբանական անվտանգության հետազոտությունների շրջանակներում ուսումնասիրվել են ուսանողների հուզական տոնուսի ցուցանիշները: Հետազոտություններին մասնակցել են բակալավրիատի երրորդ և չորրորդ կուրսեցիները: Ըստ Ստյուդենտի չափանիշի, խմբերի համար հուզական տոնուսի ցուցանիշների տարբերություններ չի գրանցվել: Այնուհետև հետազոտական ընտրանքից առանձնացվել են ավարտական կուրսի ուսանողների ցուցանիշները և շարունակվել է հետազոտությունը մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողների հետ [1]: Ընտրանքը կազմել են 43 հոգի:

Հուզական տոնուսի յուրաքանչյուր 5 ենթագործոնի հաշվարկվել են միջին արժեքները և դիսպերսիաները, հաշվարկվել են բանաձևերը:

Ներկայացնենք դրանցից մեկը.

$$t_h = \frac{|\overline{x} - \overline{y}|}{\sqrt{\sigma_x{}^2 / n_1 + \sigma_y{}^2 / n_2}} = \frac{17 - 14}{\sqrt{(3,4)^2 / 23 + (3,4)^2 / 23}} \approx 2,99$$

df=44

Բոլոր ենթագործոնների համար աղյուսակն ունեցել է հետևյալ տեսքը:

Աղյուսակ 4.1

		1	2	3	4	5
		Հոգեկան ակտիվություն	*Հետաքրքրու-թյուն*	*Հուզական տոնուս*	*Լարվածու-թյուն*	*Կոմֆորտ*
Բակ.	$\bar{x}$	13	10	17	14	14
	σ_x	4,1	3,7	3,4	3,4	2.7
Մագ.	$\bar{y}$	13	11	14	14	12
	σ_y	4.2	3.7	3.4	3.4	3.6
$t_{0.95}=2.01$		0.32	0.57	**2.99**	0.23	**2.55**

P<0,05

Ըստ Ստյուդենտի t չափանիշի մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողների խմբերում էական տարբերությունները գրանցվել էին կոմֆորտի և հուզական տոնուսի ենթագործոնների համար: Ընդ որում, մագիստրոսների խմբում միջին ցուցանիշները մոտեցել էին նորմային:

4.1.1. ՄԻՋԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԿԱԽՅԱԼ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Կախյալ հետազոտական խմբերի համար Ստյուդենտի չափանիշն ունի այլ տեսք.

$$t = \frac{|M_d|}{\sigma_d / \sqrt{n}} \qquad (4.2)$$

df=n-1

M_d-ն երկու ընտրանքների ցուցանիշների տարբերություններից ստացված շարքի միջին արժեքն է,

σ_d-ն երկու ընտրանքների ցուցանիշների տարբերություններից ստացված շարքի ստանդարտ շեղումը:

Այս չափանիշով համեմատվում են երկու ընտրանքներ, որոնք կախյալ են, այսինքն մեկի ընտրությունը կարող է պայմանավորել մյուսինը, սակայն դրանք վերցված են տարբեր գլխավոր համախմբություններից:

Ներկայացնենք բանաձևի կիրառման օրինակ թվային երկու շարքերի համար, որոնք կախյալ են. X-երի շարքը ներկայացնում են սթրեսադիմացկունության ցուցանիշները այն ընտրանքից, որտեղ ծնողներն են, իսկ y-ների շարում՝ համապատասխանաբար ներկայացված են երեխաների ցուցանիշները.

Կազմենք սթրեսադիմացկունության թեստի ցուցանիշների աղյուսակը երկու խմբերի համար (օրինակի ներկայացման համար ընտրվել են տվյալների մի մասը).

Աղյուսակ 4.2

N	x	Y	Շարքերի տարբերությունը (d)
1	5	4	1
2	7	4	3
3	4	6	-2
4	6	7	-1
5	5	5	0
6	5	4	1
7	3	4	-1

df=6

M_d*=0,14*

σ_d*=1,68*

Հաշվարկենք բանաձևը.

$$t=\frac{|M_d|}{\sigma_d/\sqrt{n}}=\frac{0{,}14}{1{,}68/\sqrt{7}}\approx 0$$

Ստացված ցուցանիշը չի գերազանցում աղյուսակին նշանակությունը, այսինքն թվային շարքերի միջև ենթադրվող նմանությունը հաստատվում է, տարբերությունը հավաստի չէ:

4.1.2. ԴԻՍՊԵՐՍԻԱՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՖԻՇԵՐԻ ՉԱՓԱՆԻՇ

Պարամետրական մեթոդներով ընտրանքների համեմատությունը կարող ենք կատարել ոչ միայն Ստյուդենտի t չափանիշի օգնությամբ, այլև F ֆիշերի չափանիշով: Այն իրենից ներկայացնում է երկու ընտրանքների համար թվային ցուցանիշների դիսպերսիաների հարաբերություն: Անկախ ընտրանքների համար դիսպերսիաների համեմատությունը համարվում է նույնիսկ անհրաժեշտ:

Դիսպերսիների համեմատության Ֆիշերի չափանիշն ունի հետևյալ տեսքը.

$$F = \frac{\sigma_x^{\ 2}}{\sigma_y^{\ 2}} \qquad (4.3)$$

$df_x = n_1 - 1,$

$df_y = n_2 - 1$

Համարիչում ներկայացվում է այն դիսպերսիան, որն ունի ավելի մեծ նշանակություն, իսկ հայտարարում՝ փոքրը:

Եթե դրվում է ենթադրություն, որ դիսպերսիաներին ունեն հավասար նշանակություններ, ապա ստացված արժեքը պետք է չգերազանցի աղյուսակային նշանակությանը:

5. ԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՊԱՐԱՄԵՏՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ինչպես արդեն նշել ենք, հետազոտական խմբերը ոչ միշտ են ընտրվում նույն գլխավոր համախմբությունից: Երկու անկախ ընտրանքների տարբերության հավաստման համար կիրառվում են մի մաթեմատիկական վիճակագրության շարք ոչ պարամետրական մեթոդներ:

Ընդհանրապես ընտրանքների տարբերության գնահատումը կատարվում է նաև պարամետրական մեթոդներով՝ օրինակ, մեիջին արժեքների համեմատության չափանիշով, սակայն ոչ պարամետրական մեթոդներին դիմում ենք՝ ելնելով հետազոտական տվյալների հատկանիշներից: Որպես նախապայման համարվում է այն, որ հետազոտական տվյալների բաշխվածությունը չի համապատասխանում նորմալության մասին օրենքին կամ ընտրանքը շատ փոքր է:

5.1. ԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆՆԱ-ՈՒԻԹՆԻԻ ՉԱՓԱՆԻՇ

Ոչ պարամետրական մեթոդների թվին է պատկանում է լայն տարածում գտած Մաննա-Ուիթնիի U չափանիշը: Այս չափանիշը նպատակահարմար է կիրառել այն դեպքերում, երբ հետազոտական ընտրանքներից յուրաքանչյուրում հետազոտվողների քանակը չի գերազանցում երկու տասնյակը: Սակայն, նշեքն, որ ընտրանքներում հետազոտվողների քանակները կարող են տարբեր լինել: Այսինքն, այս չափանիշի կիրառությունն ուղղված է անկախ խմբերի համեմտությանը:

Ըստ Մանն-Ուիթնիի չափանիշի փորձարարական նշանակություն այն է, թե որքանով են երկու ընտրանքների թվային արժեքները համընկնում: Եթե համընկնումների քանակը քիչ է, ապա շարքրեի տարբերության նշանակալիությունը ավելի է մեծ: Սովորաբար, ավելի մատչելի հաշվարկման համար թվային երկու շարքերի արժեքները դասակարգվում են, այսինքն կատարվում է ռանգավորում, բերվում թվային մեկ շարքի՝ համապատասխան փոփոխականներով: Որքան այդ փոփոխականները դասավորվեն համաչափ, այնքան ենթադրությունը, որ այդ շարքերը տարբեր են, կհերքվի: Իսկ եթե որպես զրոյական վարկած ձևակերպված շարքերի նմանությունը, ապա կհաստատվի:

Մանն-Ուիթնի չափանիշը կիրառման համար հաշվարկվում են երկու գործակիցներ՝ U_x և U_y, հետևյալ բանաձևերով.

$$U_x = mn - R_x + \frac{n(n+1)}{2}$$
$$U_y = mn - R_y + \frac{m(m+1)}{2} \qquad (5.1)$$

որտեղ՝

R_x- ը X-երի շարքի ռանգային գումարն է,

R_y –ը Y-ների շարքի ռանգային գումարն է,

n-ը խմբի քանակը, որը համապատասխանում է X-երին,

m-ը ՝Y-ների շարքինը:

Մաննա-Ուիթնի չափանիշի համար $U_x + U_y = mn$:

Բերենք U չափանիշի կիրառման օրինակ:

Ուսանողների երկու ոչ մեծ խմբերում անցկացվել են թեստային առաջադրանքներ: Խմբերից մեկում նախապես տրվել է լրացուցիչ հրահանգ այն մասին, որ թեստային առաջադրանքներից ստացված արդյունքը անդրադառնալու է ամփոփիչ քննական ցուցանիշի վրա, իսկ երկրորդ խմբում ուսանողները կատարել են որպես ընթացիկ ստուգման առաջադրքները: Ենթադրվում է, որ լրացուցիչ խրախուսանքը պետք է առաջ բերի առաջադրանքների կատարման հաջողություն, այսինքն խմբերում պատրաստվածության մակարդակի վրա պետք է ազդեցություն թողնի հաջող վերջնարդյունքի խթանումը:

Ստացվել են հետևյալ ցուցանիշները.

Աղյուսակ 5.1

X և Y շարքերի	2	4	5	6	6	6	8	9	10	10	12	14	17	18	18	19

արժեքները՝ բերված ռանգերի	Y	y	y	x	y	y	y	x	x	x	y	x	y	x	X	x
	1	2	3	5	5	5	6	7	8,5	8,5	10	11	12	13	14	15

Կրկնվող ռանգերի համար վերցվում է միջին ռանգ. օրինակ, եթե երեք ուսանողներ ստացել են 6 միավոր, իսկ հաջորդ ռանգը 4-ն է, ապա 4-րդ, 5-րդ և 6-րդ ռանգերի համար պետք է գրանցել 5-ը, իսկ 8-րդ և 9-րդ ռանգերի համար՝ 8,5, քանի որ երկու ուսանողներ ստացել են 10 միավոր:

Մեր օրինակի համար խմբերի քանակները նույնն են՝ n=m=8:

Ռանգային գումարը X-երի և Y-ների համար՝

$R_x=72$, իսկ $R_y=44$

Հաշվարկենք U_x և U_y գործակիցները.

$$U_x = mn - R_x + \frac{n(n+1)}{2} = 64 - 72 + \frac{8(8+1)}{2} = 28$$
$$U_y = mn - R_y + \frac{m(m+1)}{2} = 64 - 44 + \frac{8(8+1)}{2} = 56$$

Կատարենք ստուգում. ստացված գործակիցների գումարը պետք է հավասար լինի երկու շարքերի քանակների արտադրյալին.

$$U_x + U_y = mn$$
$$28 + 56 = 64$$

Աղյուսակային նշանակության հետ համեմատելու համար պետք է գտնենք հորիզոնական և ուղղահայաց 8-րդ շարքերի գործակիցը (հավելված 1), այն 13 է: Մեր խմբերի համար պետք է ընտրենք U-ի այն արժեքը, որն ավելի փոքր է և համեմատենք աղյուսակային նշանակության հետ:

Եթե փորձարարական ճանապարհով հաշվարկված գործակիցներից փոքրի արժեքը գերազանցում է աղյուսակային նշանակությունը, ինչը վկայում է խմբերում առաջադրանքների կատարման արդյունքի տարբեր մակարդակների մասին: Այսինքն մեր ենթադրությունը հաստատվում է $p<0,01$ նշանակալիությամբ:

5.2. ԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԻԼԿՈՔՍՈՆԻ ՉԱՓԱՆԻՇ

Երկու կախյալ ընտրանքների համեմատության համար կիրառվում է Ուիլկոքսոնի *T* չափանիշը: Այս չափանիշը հիմնվում է երկու ընտրանքների ռանգավորված շարքի (զույգերով վերցված) տարբերությունների բացարձակ արժեքների վրա:

Ուիլոկոքսոնի չափանիշի էությունը կայանում է նրանում, որ այն համադրում է երկու շարքերի տեղաշարժը թե դեպի դրական, թե դեպի բացասական ուղղությամբ: Սկզբնապես հաշվարկվում են ռանգերի տարբերությունների գումարները համապատասխանաբար դրական՝ T_1 (փոքրից-մեծ), և բացասական՝ T_2 (մեծից-փոքր), տարբերությունների համար: Այնուհետև առանձնացվում են տարբերությունների բացարձակ մեծությունները երկու ուղղությունների համար և հաշվարկվում են ռանգային գումարները:

Եթե տեղաշարժերը դրական և բացասական կողմերով պատահական բնույթ է կրում, ապա ռանգային գումարները մոտ են լինում: Իսկ եթե տեղարշարժը որևէ ուղղությամբ կրում է ինտենսիվ բնույթ, ապա նշանակում է, որ բացարձակ մեծությունների համար ռանգային գումարների տարբերությունը էական է: Ստացված մեծությունները համեմատվում են աղյուսակային նշանակության հետ: Ընդ որում, համեմատվում է փոքրաքանակ տեղաշարժին համապատասխան ռանգային գումարը:

Բերենք օրինակ համեմատվում են թվային երկու շարքեր, որոնց ցուցանիշները ստացվել են հետազոտվողների խմբում թրեյնինգային ծրագիրն իրականացնելուց առաջ և հետո: Ենթադրվում է, որ ծրագրի ավարտին պետք է ակնկալենք դրական տեղաշարժ:

N	Թեստավորում	Ռե-թեստավորում	Տարբերություն	Ռանգավորում	T_1	T_2

1	21	20	1 (-)	2,5		2,5
2	40	39	1 (-)	2,5		2,5
3	37	40	3 (+)	6	6	
4	45	47	2 (+)	5	5	
5	24	31	7 (+)	9	9	
6	30	35	5 (+)	7	7	
7	27	33	6 (+)	8	8	
8	38	39	1 (+)	2,5	2,5	
9	31	30	1 (-)	2,5		2,5
10	22	31	9 (+)	10	10	
Գումար				110	47,5	7,5

Ռանգավորումը կատարվում է հետևյալ կերպ. կրկնվող ռանգերի համար վերցնում են միջին ռանգ: Այսինքն 1-ին համապատասխանող ռանգը կլինի 2,5:

Ընդհանուր ռանգային գումարի հաշվարկը ստուգվում է հետևյալ կերպ.

